

Քեռի Ֆեռղորը, շունը եւ կատուն

հեղինակ՝ Էրուարդ Ռոսպենսկի
թարգմանիչ՝ Լիլիթ Մելքոնյան
աղբյուր՝ «Քեռի Ֆեռղորը, շունը եւ կատուն»

Բովանդակություն

- 1 Գլուխ առաջին — Քեռի Ֆեռղորը
- 2 Գլուխ երկրորդ — Գյուղը
- 3 Գլուխ երրորդ — Նոր հոգսեր
- 4 Գլուխ չորրորդ — Գանձը
- 5 Գլուխ հինգերրորդ — Առաջին զնումը
- 6 Գլուխ վերեցորդ — «Առ ու փախիր» ճայակը
- 7 Գլուխ յոթերրորդ — Տրակ-տրակ Սիսյան
- 8 Գլուխ ութերրորդ — Գայլուկը ծաղկում է
- 9 Գլուխ իններրորդ — Չեր որդի՝ Քեռի ֆարիկ
- 10 Գլուխ տասներրորդ — Շարիկը զնում է անտառ
- 11 Գլուխ տասնմեկերրորդ — Կուլրիկը
- 12 Գլուխ տասներկուերրորդ — Հայրիկն ու մայրիկը կարդում են նամակը
- 13 Գլուխ տասներերերրորդ — Շարիկը փոխում է մասնագիտությունը
- 14 Գլուխ տասնորսերրորդ — Պրոֆեսոր Սյոմինի վերադարձը
- 15 Գլուխ տասնինգերրորդ — Նամակ արեւի ինստիտուտին
- 16 Գլուխ տասնվեցերրորդ — Հորթուկը
- 17 Գլուխ տասնյոթերրորդ — Չրույց պրոֆեսոր Սյոմինի հետ
- 18 Գլուխ տասնութերրորդ — Փոստատար Պետքինի նամակը
- 19 Գլուխ տասնիններրորդ — Ծանրօցը
- 20 Գլուխ բասներրորդ — Արեւը
- 21 Գլուխ բասնմեկերրորդ — Քեռի ֆեռղորի հիվանդությունը
- 22 Գլուխ բասներկուերրորդ — Դեպի տուն

Գլուխ առաջին — Քերի Ֆեռդորը

Մի հայրիկ ու մայրիկ մի տղա ունեին, անունը՝ Քերի Ֆեռդոր: Քերի Ֆեռդոր էին ասում, որովհետեւ նա շատ լուրջ ու ինքնուրույն տղա էր: Չորս տարեկանում կարդալ էր սովորել, իսկ վեցում արդեն ինքն իր համար ապուր էր եփում: Մի խոսքով, շատ լավ տղա էր: Ծնողներն էին լավը՝ հայրիկն ու մայրիկը:

Եվ ամեն ինչ լավ կլիներ, եթե մայրը կենդանիներ սիրեր: Հատկապես ամեն տեսակ կատուներ: Իսկ Քերի Ֆեռդորը կենդանիներ սիրում էր ու այդ պատճառով հաճախ էր վիճում մայրիկի հետ:

Մի անգամ այսպիսի բան պատահեց: Քերի Ֆեռդորը ինքն իր համար բարձրանում է աստիճաններով ու բուտերբրող ուսում: Մեկ է տեսնում է պատուհանին մի կատու է նստած: Մի մեծ շերտավոր կատու: Կատուն Քերի Ֆեռդորին ասում է.

— Բուտերբրողը ճիշտ չես ուսում, Քերի Ֆեռդոր: Դու երշիկը հացի վրա ես դրել, այնինչ պետք է այնպես դնես, որ լեզվով շոշափես: Այդպես ավելի համեղ կլինի:

Քերի Ֆեռդորը փորձում է՝ այդ ձեւով իսկապես համով էր: Նա հյուրասիրում է կատվին եւ հարցնում:

— Իսկ ի՞նչ զիտես, որ իմ անունը Քերի Ֆեռդորը է:

Կատուն պատասխանում է.

— Ես ձեր տնեցիներին բոլորին է ճանաչում եմ: Զեղնահարկում եմ ապրում եւ ամեն ինչ տեսնում եմ: Ով է լավ, ով է վատ: Միայն թե իմաս իմ ձեղնահարկը նորոգում են, եւ ես ապրելու տեղ չունեմ: Վերանորոգումից հետո էլ, երեւի, ընդմիշտ կկողապեն դուռը:

— Իսկ ո՞վ է քեզ խոսել սովորեցրել,— հարցնում է Քերի Ֆեռդորը.

— Եհ, սովորել եմ, էի,— ասում է կատուն: — Մի բառ էստեղից, մի բառ էնտեղից: Բացի այդ, ես ապրում էի մի պրոֆեսորի մոտ, որը ուսումնասիրում էր կենդանիների լեզուն: Ու այդպես սովորեցի: Հիմա առանց լեզու իմանալու անհնար է ապրել: Ոտքով, գիխով կկորչես, կամ քեզանից գլխարկ կկարեն, կամ օձիք, կամ էլ ոտի տակ կզցեն:

Քերի Ֆեռդորն ասում է.

— Արի, ինձ մոտ ապրիր:

Կատուն տատանվում է:

— Մայրիկդ կվոնդի:

— Զի վրոնդի: Գուցե հայրիկս պաշտպանի:

Եվ գնացին: Կատուն կերավ եւ ամբողջ օրը աղայավարի քնեց բազմոցի տակ: Իսկ երեկոյան հայրիկն ու մայրիկը եկան: Մայրիկը հենց որ ներս մտավ, անմիշապես ասաց.

— Այս ի՞նչ կատվահոտ է գալիս: Կաշկա Քերի Ֆեռդորը կատու է տուն քերել:

Իսկ հայրիկն ասաց.

— Ինչ անենք: Կատու է, էի: Մի կատուն մեզ չի խանգարի:

Մայրիկն ասաց.

- Քեզ չի խանգարի, ինձ կխանգարի:
- Ինչո՞վ կխանգարի:
- Կխանգարի,— պատասխանեց մայրիկը:— Հապա մի մտածիր, ի՞նչ օգուտ ունենք այդ կատվից:

Հայրիկն ասաց.

- Ի՞նչ օգուտ պիտի ունենանք: Որեւէ օգուտ ունե՞ս պատից կախված այս նկարից:
- Այդ նկարից,— ասաց մայրիկը,— շատ մեծ օգուտ կա: Քողարկում է պատառի վրայի անցըերը:

— Հետո ինչ,— շիամաձայնեց հայրիկը:— Կատվից էլ օգուտ կտեսնես: Մենք նրան շան տեղ կվարժեցնենք: Պահապան կատու կունենանք: Տունը կհսկի: Չի հաջի, չի կծի, բայց չի էլ թողնի, որ տունը մարդ մտնի:

Մայրիկը նույնիսկ բարկացավ.

- Դու էի՞ սկսեցիր գլխիդ զոռ տալ... Երեխայիս փշացրել ես... Ահա թե ինչ կասեմ: Եթե այդ կատուն քեզ շատ է դուր զալիս, ուրեմն ընտրիր՝ կամ ես, կամ նա:

Հայրիկը նախ նայեց մայրիկին՝ ապա՝ կատվին: Հետո՝ նորից մայրիկին, ապա՝ կատվին:

- Ես,— ասաց,— քեզ եմ ընտրում: Քեզ արդեն վաղուց եմ ճանաչում, իսկ այդ կատվին առաջին անգամ եմ տեսնում:

— Իսկ դո՞ւ ում ես ընտրում, Քերի Ֆեռոր, — հարցրեց մայրիկը:

- Ոչ մեկիդ, — պատասխանեց տղան, — բայց որ կատվին վրնդեք, ես էլ կհեռանամ տնից:

— Ինչպես կուզես, — ասաց մայրիկը, — միայն թե վաղը կատվի հետքն անգամ չտեսնեմ:

Մայրը, իհարկե, չեր հավատում, որ Քերի Ֆեռորը տնից կզնա: Հայրիկն էլ չեր հավատում: Նրանք մտածեցին, որ տղան հենց այնպես է ասում: Իսկ նա լուրջ էր ասում:

Դեռ իրիկվանից ինչ-որ պետք էր դրեց ուսապարկի մեջ: Ե՛վ գրչահատ, ե՛ւ տաք բաճկոն, ե՛ւ լապտեր: Վերցրեց ամբողջ փողը, որ հավաքել էր ակվարիում գնելու նպատակով: Կատվի համար էլ պայուսակ պատրաստեց: Բարեբախտաբար կատուն տեղավորվեց պայուսակի մեջ, միայն բեղերն էին դուրս ցցվել: Եվ պառկեց քնելու:

Առավոտյան հայրիկն ու մայրիկը աշխատանքի գնացին: Քերի Ֆեռորը արթնացավ, շիլա եփեց իր համար, նախաճաշեց կատվի հետ եւ սկսեց նամակ գրել.

«Սիրելի ծնողներ, հայրիկ ու մայրիկ:

Ես ձեզ շատ եմ սիրում: Կենդանիներ էլ շատ եմ սիրում: Եվ այս կատվին՝ նույնպես: Իսկ դուք չեք թողնում նրան պահեմ: Պատվիրում եք՝ տնից վրնդել: Դա ճիշտ չէ: Ես գնում եմ զյուր, այնտեղ եմ ապրելու:

Դուք ինձ համար մի՛ անհանգստացեք: Ինձ ոչինչ էլ չի լինի: Իմ ձեռքից ամեն ինչ զալիս է, ես ձեզ կգրեմ: Իսկ մինչեւ դարոց գնալս բավական ժամանակ կա դեռ: Եկող տարի եմ գնալու:

Յատեսություն: Ձեր որդի՝ Քեռի Ֆեռդոր»:

Նա նամակը զցեց իր անձնական փոստարկողը, վերցրեց ուսապարկն ու պայուսակը, որի մեջ կատուն էր, եւ զնաց ավտոբուսի կանգառ:

Գլուխ երկրորդ — Գյուղը

Քեռի Ֆեռդորը նստեց ավտոբուս եւ զնաց: Հաճելի էր ճանապարհ զնալը: Այդ ժամին ավտոբուսները քաղաքից դատարկ էին մեկնում: Եվ ոչ ոք նրանց չէր խանգարում զրուցել: Քեռի Ֆեռդորը հարցեր էր տալիս, իսկ կատուն պատասխանում էր պայուսակի միջից:

Քեռի Ֆեռդորը հարցնում է.

— Անունդ ի՞նչ է:

Կատուն ասում է.

— Ես ի չգիտեմ: Ե՛վ Հովազիկ են ասել ինձ, ե՛ւ Փափկամայիկ, ե՛ւ Հիմարիկ: Եվ նույնիսկ Փիստ Փիսիկիչ եմ եղել: Միայն թե այդ բոլորը ինձ դուք չի գալիս: Ես ուզում եմ ազգանուն ունենալ:

— Ինչպիսի՞:

— Մի որեւէ լուրջ ազգանուն: Ծովային ազգանուն: Չէ՞ որ ես ծովային կատուների ցեղից եմ: Նավատորմային: Տատիկս ու պապիկս նավով շատ են ճանապարհորդել նավաստիների հետ: Ծովն ինձ էլ է ձգում: Շատ եմ կարոտում օվկիանոսներին: Միայն թե ջրից վախենում եմ:

— Արի ազգանունդ Մատրոսկին դնենք,— ասում է Քեռի Ֆեռդորը:— Ե՛վ կատուների հետ է կապված, ե՛ւ ինչ-որ ծովային բան կա այդ ազգանվան մեջ:

— Այո, ծովային բան կա,— համաձայնում է կատուն,— ճիշտ է: Իսկ ի՞նչով է կապված կատուների հետ:

— Զգիտեմ,— ասում է Քեռի Ֆեռդորը:— Գուցե նրանով, որ կատուներն ել են շերտավոր, նավաստիներն էլ: Նրանց շապիկները շերտավոր են:

Կատուն համաձայնում է:

— Ինձ դուք է գալիս այդ ազգանունը՝ Մատրոսկին: Ե՛վ ծովային է, ե՛ւ լուրջ:

Նա այնքան է ուրախանում, ազգանուն ունենալու համար, որ նույնիսկ ուրախությունից ժատում է: Ավելի խորն է ընկրման պայուսակի մեջ ու սկսում է փորձել իր ազգանունը:

«Եռախոսի մոտ կանչեցեք, խնդրեմ, կատու Մատրոսկինին»:

«Կատու Մատրոսկինը չի կարող մոտենալ հեռախոսին: Նա շատ զբաղված է: Պառկած է վառարանին»:

Եվ որքան շատ էր փորձում, այնքան ավելի էր հավանում իր ազգանունը: Նա գլուխը դուրս է հանում պայուսակից եւ ասում.

— Ինձ շատ է դուր գալիս, որ ազգանունս ծաղրական չէ: Ինչպես ասենք՝ Իվանով կամ Պետրով:

Քենի Ֆեռնորը հարցնում է.

— Իսկ դրանք ինչո՞վ են ծաղրական:

— Նրանով, որ միշտ կարելի է ասել. «Պետրով, խփեմ քեզ տետրով, Իվանով՝ ո՞ւր ես զնում տուգ ու շիվանով»: Իսկ Մատրոսկինին այդպիսի պոչ չես կարող կպցնել:

Այստեղ ավտորուսը կանգ առավ: Նրանք գյուղ էին հասել:

Գյուղը գեղեցիկ էր: Շուրջն անտառ էր, դաշտ, եւ գետն էլ հեռու չէր: Տաք, հաճելի քամի էր փշում, մոծակներ չկային: Մարդիկ էլ շատ քիչ էին գյուղում:

Քենի Ֆեռնորը տեսավ մի ծերունու եւ հարցրեց.

— Այստեղ որեւէ ազատ տուն չկա՞՝, որտեղ հնարավոր լինի ապրել:

Ծերունին պատասխանեց.

— Որքան ուզես: Գետի մյուս ափին նոր տուն են կառուցել, իհնզիարկանի, ինչպես քաղաքում: Եվ գյուղի կեսն այնտեղ է տեղափոխվել: Իսկ իրենց տները թողել են: Բանջարանցներն էլ: Որոշ տեղերում՝ նույնիսկ հավերին: Ընտրիր, որն ուզում ես, եւ ապրիր:

Եվ զնացին փնտրելու: Ճանապարհին մի շուն մոտեցավ նրանց: Փրցոտ, զզզված, մազերին կոծոծներ կպած:

— Թույլ տվեք, ես էլ ձեզ հետ ապրեմ,— ասաց:— Զեր տունը կհսկեմ:

Կատուն չհամաձայնեց:

— Մեզ հսկի պետք չէ: Դեռ իսկի տուն չունենք, հսկիչն ի՞նչ ենք անում: Մի տարուց հետո արի, երբ հարստացած կլինենք: Վյո ժամանակ քեզ կվերցնենք:

Քենի Ֆեռնորն ասաց.

— Սպասիր, կատու: Լավ շունք դեռ ոչ մեկին չի խանգարել: Ավելի լավ է արի իմանանք, թե նա որտեղ է խոսել սովորել:

— Ես մի պրոֆեսորի ամառանոցն էի հսկում,— պատասխանեց շունք:— Պրոֆեսորը կենդանիների լեզուն էր ուսումնասիրում: Վյո ժամանակ կ հենց սովորեցի:

— Դա երեւի իմ պրոֆեսորն է,— բղավեց կատուն:— Սյոմին Իվան Տրոֆիմովիչը: Նա կին ուներ, երկու երեխա եւ մեկ տատիկ՝ ավելը ձեռքին: Ու միշտ զբաղված էր «Ուս—կատվերեն» բառարան կազմելով:

— «Ուս—կատվերեն» չգիտեմ, բայց «Որսորդա—շներեն» կազմում էր: Եվ «Կովա—նախրապաներեն» նույնպես: Իսկ տատիկի ձեռքին էլ ավել չկա: Նրա համար փոշենծիչ են զնել:

— Միեւնույն է, դա իմ պրոֆեսորն է,— ասաց կատուն:

— Իսկ նա հիմա որտե՞ղ է,— հարցրեց տղան:

— Աֆրիկա գնաց: Գործուղման: Փղերի լեզուն ուսումնասիրելու: Իսկ ես մնացի տատիկի մոտ: Միայն թե մենք յոյա չգնացինք: Ես սիրում եմ, որ մարդ ուրախ բնավորություն է ունենում՝ երշիկահյուրասիրողական: Իսկ նա, ընդհակառակը, ծանր բնավորություն ուներ: Ավելա—վոնդողական:

— Ծիշտ է,— հաստատեց կատուն,— բնավորությունն էլ էր ծանր, ավելն էլ:

— Հը՞, ինչ եք ասում: Հիմա թույլ տալի՞ս եք ձեզ հետ ապրեմ,— հարցրեց շունը:— Թե՛ հետո զամ: Մի տարի անց:

— Թույլ ենք տալիս,— պատասխանեց Զետի Ֆեռոդորը:— Երեքով ավելի ուրախ կլինի: Ի՞նչ է անունդ:

— Շարիկ,— պատասխանեց շունը: Ես հասարակ շներից եմ: Ցեղական չեմ:

— Իսկ իմ անունը Զետի Ֆեռոդոր է: Կատվինը՝ Մատրոսկին. դա ազգանունն է:

— Շատ հաճելի է,— ասաց Շարիկն ու գլուխ տվեց: Անմիջապես երեւաց, որ դաստիարակված շուն է: Լավ ընտանիքից: Միայն թե տեր չի ունեցել:

Բայց կատուն, միեւնույն է, դժգոհ էր: Նա Շարիկին հարցրեց.

— Զեռիցդու ի՞նչ է զալիս: Կողպերն էլ կարող է տուն պահպանել:

— Ես կարող եմ ետեւի թաթերով կարտոֆիլի բուկ լցնել: Եվ լպստերով ամանները լվանալ: Քնելու տեղ էլ հարկավոր չէ ինձ, դրսում կընեմ:

Նա շատ էր վախենում, որ իրեն չընդունեն:

Իսկ Զետի Ֆեռոդորն ասաց.

— Հիմա պետք է տուն փնտրենք: Եկեք բոլորս առանձին-առանձին ման զանք գյուղում: Հետո կորոշենք, թե ում ընտրածն է հարմար:

Եվ սկսեցին որոնել: Ամեն մեկն ընտրեց այն, ինչ իրեն ավելի էր դուր զալիս: Իսկ հետո նորից հավաքվեցին: Կատուն ասաց.

— Ես մի շատ լավ տուն եմ գտել: Պատերն ամբողջովին խծուծված: Տաք վառարան կա խոհանոցում: Գնանք, այնտեղ ապրենք:

Շարիկը քրքաց.

— Վառարանն ի՞նչ է որ, դատարկ բան է: Մի՞թե կարեւոր դա է: Այ, իմ գտածը տուն է: Այստեղ այնպիսի մի շան բուն կա որ, հրա՛շը: Ոչ մի տուն էլ պետք չէ: Բոլորս էլ կտեղավորվենք բնում:

Զետի Ֆեռոդորն ասաց.

— Երկուսդ էլ կարեւորի մասին չեք մտածում: Անհրաժեշտ է, որ տանը անպայման հեռուստացույց լինի: Եվ պատուհանները մեծ լինեն: Հենց այդպիսի մի տուն եմ գտել ես: Տանիքը՝ կարմիր: Այզի ու բանջարանց էլ կա: Գնանք տեսնենք:

Եվ գնացին տեսնելու: Հենց որ մոտեցան, Շարիկը բղավեց.

— Այս սա հենց իմ գտած տունն է: Ես այս բնի մասին էի ասում:

— Եվ իմ տեսած վառարանը,— ասաց կատուն:— Ամբողջ կյանքումս այսպիսի վառարան եմ երազել, երբ ցուրտ է եղել:

— Այ թե լավ ստացվեց,— ասաց Քերի Ֆեռդորը:— Երեւում է, իսկապես, մենք ամենալավ տունն ենք ընտրել:

Նրանք մի լավ զննեցին տունը եւ ուրախացան: Ամեն ինչ կար: Ե՞վ վառարան, ե՛ւ մահճակալներ, ե՛ւ վարագույրներ պատուհաններին, ե՛ւ ռադիորնդունիչ, ե՛ւ հեռուստացույց: Իհարկե, հնացած: Խոհանոցում է տարբեր տեսակի չուզունե ամաններ կային: Բանջարանոցում ամեն ինչ ցանված էր: Ե՞վ կարտոֆիլ, ե՛ւ կաղամբ: Միայն թե ամեն ինչ աշքաթող էր արված, քաղիանված չէր. Խոկ ցախանոցում մի կարթ կար:

Քերի Ֆեռդորը վերցրեց կարթը եւ զնաց ձուկ որսալու: Խոկ Շարիկն ու կատուն վառարանը վառեցին ու ջուր բերեցին: Հետո կերան, ռադիո լսեցին ու պառկեցին քնելու: Նրանք շատ լավ էին զգում այդ տանը:

Գլուխ երրորդ — Նոր հոգսեր

Հաջորդ առավոտյան Քերի Ֆեռդորը, շունն ու կատուն տունը հավաքեցին, սարդոստայնները մաքրեցին, աղբը թափեցին, վառարանը կարգի բերեցին: Կատուն կաշվից դուրս էր զալիս. նա շատ մաքրասեր էր: Լաթը ձեռքին բարձրանում էր պատուհանների վրա, մտնում բազմոցների տակ: Առանց այդ էլ տունը շատ կեղտոտ չէր, խոկ հիմա ուղղակի սկսեց փայլել:

Բայց Շարիկից այնքան էլ օգուտ չկար: Միայն այս ու այն կողմ էր վագվզում, ուրախությունից հաշում եւ սենյակով մեկ փոշտում: Քերի Ֆեռդորը էլ չդիմացավ, նրան ուղարկեց կարտոֆիլի բուկը լցնելու: Եվ շունն այնպես գործի կպավ, որ հողը սկսեց աշխարհով մեկ շաղ տալ:

Ամբողջ օրն այդպես աշխատեցին: Ե՞վ գազարի մարզը քաղիանեցին, ե՛ւ կաղամբի: Չէ՞ որ եկել էին այստեղ ապրելու եւ ոչ թե տուն-տուն խաղալու:

Խոկ հետո զնացին գետակ լվացվելու եւ, հատկապես, Շարիկին լողացնելու:

— Դու շատ կեղտոտ ես,— ասաց Քերի Ֆեռդորը:— Պետք է մի լավ լողանաս:

— Ես էլ ուրախ կլինեի,— պատասխանեց շունը,— միայն թե ինձ հարկավոր է օգնել: Մենակ չեմ կարող: Օճառն ատամներիս արանքից դուրս է պրծնում: Խոկ առանց օճառի ինչ լողանալ: Ուղղակի թրջվել է նշանակում, ուրիշ ոչինչ:

Շունը մտավ ջուրը, խոկ Քերի Ֆեռդորը օճառեց նրան եւ մազերը սանրեց: Կատուն շրջում էր ափին եւ թախծում օվկիանոսների կարոտից: Չէ՞ որ նա ծովային կատու էր, միայն թե վախենում էր ջրից:

Հետո նրանք արեւոտ մի արահետով տուն զնացին: Դիմացից մի քերի էր վազում նրանց կողմը: Գլխարկը զիշին, կարմրաթուշ: Նա հիսունից մի բան էլ ավելի կլիներ: (Իհարկե, ոչ թե քերին ավելի կլիներ, այլ նրա տարիքը): Կանգ է առնում քերին ու հարցնում.

— Դու ո՞ւմն ես, այ տղա: Որտեղից ես հայտնվել մեր գյուղում:

Քերի Ֆեռդորը պատասխանում է.

— Ոչ մեկինն էլ չեմ: Ես եմ իմ զիշի տերը: Իմ սեփականն եմ: Քաղաքից եմ եկել:

Գլխարկով մարդո շատ է զարմանում եւ ասում է.

— Այդպես չի լինում, որ երեխաները իրենք իրենց գլխի տերը լինել: Իրենց սեփականը: Երեխաներն անպայման ինչ-որ մեկինն են լինում:

— Ինչպե՞ս թե չի լինում,— բարկանում է Մատրոսկինը:— Ես, օրինակ, կատու եմ ինքս իմ գլխի տեր կատու: Իմ սեփականը:

— Ես եմ իմ սեփականը,— ասում է Շարիկը:

Քեռին բոլորովին շփոթվում է: Համ կատուներն են խոսում, համ շները: Ինչ-որ անսովոր մի բան կա այստեղ: Նշանակում է, ինչ-որ բան կարգին չէ: Դա բավական չէր, մի կողմից էլ Քեռի Ֆեռդորն է սկսում վրա տալ.

— Իսկ ինչո՞ւ եք հարցնում: «Պատահմամբ հո միլիցիայից չե՞ք:

— Չէ, միլիցիայից չեմ,— պատասխանում է քեռին,— ես փոստից եմ: Էստեղի փոստատարն եմ՝ Պեչկինը: Դրա համար էլ ամեն ինչ պետք է իմանամ: Որպեսզի թերթերն ու նամակները հանձնեմ տերերին: Դուք, օրինակ, ի՞նչ եք բաժանորդագրվելու:

— Ես «Սուրզիկա» պետք է գրվեմ,— ասում է Քեռի Ֆեռդորը:

— Իսկ ես որտղության մասին մի որեւէ բան,— ասում է Շարիկը:

— Իսկ դո՞ւք,— քեռին հարցնում է կատվին:

— Ես ոչինչ էլ չեմ գրվելու,— պատասխանում է կատուն:— Ես պետք է փող տնտեսեմ:

Գլուխ չորրորդ — Գանձր

Մի անգամ կատուն ասում է.

— Սա ինչ բան է, մինչեւ ե՞րբ կարող ենք առանց կաթի յոլա գնալ: Այսպես կմեռնենք ախր: Պետք է անպայման մի կով գնել:

— Պետք է,— համաձայնում է Քեռի Ֆեռդորը:— Իսկ փող որտեղից ճարենք:

— Գուցե պա՞րտք անենք,— առաջարկում է շունը:— Հարեւաններից:

— Իսկ ինչպե՞ս վերադարձնենք պարտքը,— հարցնում է կատուն:— Կարծում եմ, պետք է վերադարձնել:

— Տեղը կաթ կտանք:

Բայց կատուն չի համաձայնում:

— Եթե կաթը պետք է տանք, ել կովը մեր ինչի՞ն է պետք:

— Ուրեմն պետք է ինչ-որ բան վաճառել,— ասում է Շարիկը:

— Իսկ ի՞նչ:

— Մի որեւէ անպետք բան:

— Անպետք բանը վաճառելու համար,— բարկանում է կատուն,— նախ պետք է գնենք այդ բանը: Իսկ մենք փող չունենք:— Այստեղ կատուն նայում է շանը եւ ասում.— Շարիկ, արի կինի քեզ վաճառենք:

Շարիկը բարկությունից նույնիսկ ոստոստում է տեղում.

— Ինչպե՞ս թե՝ ինձ:

— Հենց այդպես: Հիմա դու լավ պահված, գեղեցիկ շուն ես: Որսորդները քեզ համար հարյուր ոռորի կտան: Նոյնիսկ ավելի: Իսկ հետո դու կփախչես ու նորից կզաս մեզ մոտ: Այդ ժամանակ արդեն կով կունենանք:

— Հա՞,— գոռում է Շարիկը:— Իսկ եթե վիզ շղթա զցե՞ն: Արի կլինի, քեզ վաճառենք, կատու: Չո՞ տեսքն էլ է լավ: Ի՞նչ էլ թմբիկ ես դարձել: Համ էլ կատուներին չեն շղթայում:

Այստեղ Քերի Ֆեռորդը միջամտում է.

— Ոչ մեկիդ էլ չենք վաճառի: Մենք կզնանք գանձ որոնելու:

— Ուրա՞,— գոռում է Շարիկը:— Վաղուց պետք է գնայինք:— Իսկ ինքը կամացուկ հարցնում է կատվին.— Ի՞նչ բան է սանձը:

— Ոչ թե սանձ, այլ գանձ,— պատասխանում է կատուն:— Փող է դա, զարդեղեն, որ մարդիկ պահում են հողի տակ: Ավագակները:

— Ինչո՞ւ են պահում:

— Իսկ ինչո՞ւ ես դու ոսկորները այգում թաղում եւ վառարանի տակ խցկում:

— Ե՞ս: Պաշար եմ հավաքում:

— Դե նրանք էլ իրենց համար են պաշար հավաքում:

Շունն իսկույն ամեն ինչ հասկացավ եւ որոշեց ոսկորները տեղափոխել, որպեսզի կատուն տեղը չիմանա:

Եվ գնացին գանձ որոնելու: Կատուն ասում է.

— Ինչպե՞ս է, որ մինչեւ հիմա մտքովս չի անցել գանձ որոնել: Հիմա համ կով կզնենք, համ էլ բանջարանոցում չենք աշխատի: Ամեն ինչ կարող ենք շուկայից գնել:

— Խանութից էլ կարող ենք գնել,— ասում է Շարիկը: Ավելի լավ է միսը խանութից գնենք:

— Ինչո՞ւ:

— Այնտեղ ոսկորներն ավելի շատ են:

Եվ այսպես նրանք հասան անտառ ու դեմ առան մի մեծ ժայռի: Ժայռի մեջ քարանձավ կար, որտեղ մի ժամանակ ավագակներ էին ապրել: Քերի Ֆեռորդը սկսեց փորել: Իսկ շունն ու կատուն նստեցին քարերին:

Շունը հարցնում է.

— Իսկ ինչո՞ւ քաղաքում գանձ չէիր որոնում, Քերի Ֆեռորդ:

Քերի Ֆեռորդն ասում է.

— Ինչ անխելքն ես: Ո՞վ է քաղաքում գանձ փնտրում: Այնտեղ իսկի փորել կլինի՞ որ, ասֆալտ է չորս կողմը: Իսկ այստեղ տես ինչ փիրուն հող է՝ միայն ավագ: Շուտով գանձը կգտնենք: Եվ կով կզնենք:

Շունք նորից ասում է.

— Եկեք գանձը գտնելուց հետո երեք մասի բաժանենք:

— Ինչո՞ւ, — հայցնում է կատուն:

— Որովհետեւ ինձ կով պետք չէ: Ես կաթ չեմ սիրում: Ինձ համար երշիկ կզնեմ խանութից:

— Ասենք ես Էլ առանձնապես կաթ չեմ սիրում, — ասում է Ջերի Ֆեռդորը: — Այ եթե կովը կվաս տար կամ լիմոնադ...

— Իսկ իմ բաժին փողը չի բավականացնի կով գնելու համար, — առարկում է կատուն: — Տնտեսության մեջ կովն անհրաժեշտ է: Առանց կովի Էլ ի՞նչ տնտեսություն:

— Հետո՞ ինչ, — ասում է Շարիկը: — Պարտադիր չէ, որ մեծ կով գնենք: Դու Էլ փոքրը գնիր: Այդպիսի հասուկ կովեր կան կատուների համար: Նրանց այծ են ասում:

Ջերի Ֆեռդորի բաիր ինչ-որ բանի կպավ ու զնզաց: Դա մետաղակուր մի սնդուկ էր: Իսկ սնդուկում ամեն տեսակ զարդեղեն: Եվ իին մետաղադրամներ: Եվ թանկարժեք քարեր: Վերցրին սնդուկը եւ գնացին տուն: Մեկ Էլ նրանց դեմ եղավ փոստատար Պեչկինը:

— Ի՞նչ կա սնդուկիդ մեջ, տղա:

Կատու Մատրոսկինը խորամանկ էր, ասաց.

— Սունկ հավաքելու էինք գնացել:

Բայց Պեչկինն Էլ հիմար չէր:

— Իսկ սնդուկն ինչի՞ համար է:

— Սնկի: Նրա մեջ սունկը աղ ենք դնում: Հենց անտառում: Պա՞րզ է:

— Իհարկե, պարզ է: Զհասկանալու ի՞նչ կա, — ասաց Պեչկինը: Մինչդեռ ոչինչ չէր հասկացել: Չե՞ որ զամբյուղով են գնում սունկ հավաքելու: Իսկ սրանք՝ սնդուկ են վերցրել: Քիչ Էլ մնա, ճամպրուկ կվերցնեն: Այնուամենայնիվ, Պեչկինը ձեռ քաշեց:

Վերջապես տուն հասան: Նայում են՝ սնդուկում շատ փող կա: Ոչ թե մի կով, այլ մի ամբողջ նախիր կարելի է գնել, ցուլն Էլ հետը: Եվ որոշեցին, որ ամեն մեկն իր համար ինչ-որ ցանկանա, այն Էլ գնի:

Գլուխ հինգերորդ — Առաջին գնումը

Հայրիկն ու մայրիկը շատ էին վշտացել, որ Ջերի Ֆեռդորը կորել է:

— Դու ես մեղավոր, — ասում է մայրիկը: — Ամեն ինչ թույլ ես տալիս, նա Էլ երես է առել:

— Ինչ է առել, որ: Պարզապես կենդանիներ է սիրում, — բացատրում է հայրիկը: — Նրա համար Էլ կատվի հետ հեռացել է:

— Իսկ դու նրան տեխնիկա սովորեցնեիր: Կոնստրուկտոր կամ փոշեծծիչ գնեիր, որ մի զբաղմունք ունենար:

Բայց հայրիկը համաձայն չի:

— Կատուն կենդանի արարած է: Կատվի հետ կարելի է ե՛ւ խաղալ ե՛ւ զբոսանքի գնալ: Իսկ կոնստրուկտորը կարո՞ղ է թղթի ետևից վազվել: Կամ հնարավո՞ր է, օրինակ, փոշեծծիչը թելով քաշել: Քենի Ֆեռդորին ընկեր է պետք, ոչ թե խաղալիք:

— Զգիտեմ, թե նրան ինչ է պետք,— ասում է մայրիկը:— Միայն գիտեմ, որ բոլոր երեխաներն ել իրենց համար խելոք նստում են մի անկյունում եւ կաղինից մարդուկներ շինում: Նայում ես, քեֆդ գալիս է:

— Քո քեֆը գլախս է, իմը՝ ոչ: Տանը պետք է ե՛ւ շներ լինեն, ե՛ւ կատուներ, ե՛ւ ուզածիդ շափ բարեկամներ: Որ իրենց համար ազատ բռնցի-տապկնոցի խաղան: Այ, այդ դեպքում երեխաները տնից չեն փախսի:

— Այդ ժամանակ ել ծնողները կսկսեն փախչել,— ասում է մայրիկը:— Առանց այդ ել աշխատանքի վայրում շատ եմ հոգնում: Ել ուժ չեմ ունենում հեռուստացույց նայելու: Եվ ընդհանրապես քո հիմարություններով գլուխս մի՛ տանի: Ավելի լավ է մտածես, թե տղային ինչպես գտնենք:

Հայրիկը մտածեց, մտածեց, ապա ասաց.

— Հարկավոր է թերթում հայտարարություն տալ, որ տղա է կորել: Անունը՝ Քենի Ֆեռդոր, եւ նշաններն ել նկարագրել: Տեսնողը թող մեզ հայտնի:

Այդպես ել արեցին: Հայտարարություն գրեցին: Նկարագրեցին Քենի Ֆեռդորի արտաքինը: Տարիքը: Ցցված մազերը, որ կարծես կովը լիզած լինի: Եվ պարզեւ խոստացան գտնողին: Հայտարարությունը հանձնեցին ամենահետաքրքիր թերթին, որն ամենից շատ ընթերցողներ ուներ:

Իսկ Քենի Ֆեռդորն այդ մասին ոչինչ չգիտեր: Իր համար հանգիստ ապրում էր գյուղում: Մի առավոտ նա հարցնում է կատվին.

— Լսիր, կատու, առաջ դու ինչպե՞ս էիր ապրում:

Կատուն ասում է.

— Վատ: Շատ վատ: Ել չեմ ուզում առաջվա պես ապրել:

— Իսկ դու, Շարիկ, ինչպե՞ս էիր ապրում:

— Սովորական: Ոչ լավ, ոչ վատ: Ձե որ կերակրում էին, լավ էի ապրում, որ չին կերակրում վատ:

— Ես ել էի այդպես ապրում: Ոչ լավ, ոչ վատ,— ասում է Քենի Ֆեռդորը:— Բայց հիմա ուրիշ կերա պետք է ապրենք: Պետք է երջանիկ ապրենք: Մատրոսկին, այ, դու ասա, քեզ ի՞նչ է պետք երջանիկ լինելու համար:

— Կով:

— Շատ լավ, քեզ համար կով գնիր: Ավելի լավ է վարձով վերցրու, որպեսզի նախ փորձես:

Կատուն մտածում է ու ասում.

— Դա ճիշտ միտք է, վարձով կվերցնենք: Իսկ հետո, եթե մեզ դուր գա, կգնենք:

Քենի Ֆեռդորը հարցնում է Շարիկին.

- Իսկ քե՞զ ի՞նչ է պետք երջանիկ լինելու համար:
- Հրացան,— ասում է Շարիկը,— Ես ինքս մենակ որսի կգնամ:
- Լավ,— ասում է Քերի Ֆեռդորը:— Դու Էլ հրացան կունենաս:
- Ինձ մեղալներով վզնոց էլ է պետք,— ասում է շունը:— Եվ որսորդական պայուսակ:
- Մի գլուխ ուզում ես,— ասում է Մատրոսկինը:— Այս դու մեզ բոլորովին կսնանկացնես: Ոչ մի օգուտ չես տալիս, բայց ծախսի տակ ես զցում: Իսկ քե՞զ համար ինչ ես գնելու, Քերի Ֆեռդոր:
- Ինձ,— ասում է Քերի Ֆեռդոր,— հեծանիվ է պետք: Քաղաքում չթողեցին քշեմ, այնտեղ մեքենաները շատ են: Այստեղ ուզածիս չափ կարող եմ քշել: Գյուղում, դաշտում: Գնա, արի, գնա, արի, որքան սիրտդ ուզի:

Բայց կատուն համաձայն չի:

- Դու միայն քո մասին ես մտածում, Քերի Ֆեռդոր: Ուրեմն դու պետք է քեզ համար զյուղում հեծանվով ման զաս, մենք էլ ետևիցդ վազվզենք, հա՞: Գնանք, գանք, գնանք, զանք: Չե, դրա մասին չէ, որ ամբողջ կյանքումս երազել եմ: Մեզ պետք չէ քո հեծանիվը:
- Մոտոցիկետ գնիր,— առաջարկում է շունը.— դոդոացնելով կրշենք զյուղով մեկ: Բոլոր շները նախանձից կտրաքվեն:

Քերի Ֆեռդորը հենց որ պատկերացրեց այդ դոդոոցը, անմիջապես ուրախացավ: Իսկ կատուն սկսեց գոռզոռալ.

— Ոչ մի բանի մասին լուրջ չեք մտածում: Միայն թե փողերը քամուն տաք: Իսկ եթե, օրինակ, անձրեւ զա կամ սառնամանիք լինի՞: Չե՛ որ բոլորս կմրսենք: Կիհվանդանանք: Իսկ ես գուցե նոր եմ սկսում ապրել՝ մտադիր եմ կով գնել: Չե, մոտոցիկետը ինչ մեքենա է որ: Պետք չի ինձ ձեր դոդոանը, եւ չհամոզեք:

Շարիկը մտածեց, մտածեց եւ համաձայնեց.

— Այո, մոտոցիկետը դեռ մեքենա չի: Ճիշտ է ասում, մոտոցիկետ չենք գնի: Ոչ մի դեպքում: Ավելի լավ է մեքենա գնենք:

— Մեքենա՞ն որն է: Ի՞նչ մեքենա:

— Սովորական, մարդատար մեքենա,— ասում է շունը:— Մեքենան մեքենա է, էլի:

— Հետո ի՞նչ,— գոռում է կատուն: Գուցե ինչ-որ տեղ մեքենան խսկապես մեքենա է: Միայն թե ոչ մեր շրջանում: Մեր ճանապարհները այնպիսին են... Իսկ եթե լովի ու մնա անտառո՞ւմ: Այդ ժամանակ ստիպված կլինենք տրակտորով քաշել: Ավելի լավ է միանգամից տրակտոր առնենք, էլի:

— Ճիշտ է,— գոչում է շունը:— Ճիշտ է ասում: Տրակտոր գնիր, Քերի Ֆեռդոր:

Քերի Ֆեռդորը նայեց կատվին: Իսկ կատուն լուռ է: Էլ ինչ ասի: Նա թաթը թափ տվեց. իբր, ինձ համար միեւնույն է, թեկուզ կոմքայն գնեք, որ ինձ չեք լսում:

Կատուն վերցրեց փողը, զնաց կով առնելու: Իսկ Քերի Ֆեռդորը զնաց փոստ՝ նամակ ուղարկելու գործարանին, որպեսզի տրակտոր դուրս գրեն: Նա այսպիսի մի նամակ գրեց.

«Բարեւ ձեզ, հարգելի մարդիկ, որ տրակտոր եք շինում: Խնդրում եմ ինձ համար մի տրակտոր ուղարկեք: Միայն թե ոչ լրիվ իսկական, ոչ էլ լրիվ խաղալիք: Այնպիսին, որ քիչ բենզին օգտագործի, բայց արագ գնա: Ուրախ լինի եւ անձրեւից պաշտպանի: Ուղարկում եմ հարյուր ռուբրի: Եթե ավելանա, ես ուղարկեք:

Հարգանքներով... Քերի Ֆեռողոր (տղա)»:

Խսկ որոշ ժամանակից հետո հայտնվեց Մատրոսկինը՝ ետեւից քաշելով կովի պարանից: Կովը նա վարձով վերցրել էր զյուղի սպասարկման բյուրոյից: Դա կարմրացեկ, հաստամոռութ մի գոռող արարած էր: Խսկ եւ իսկ եղջրավոր պրոֆեսոր: Միայն ակնոցն էր պակասում: Կատուն էլ էր գոռողացեկ:

— Սա,— ասում է,— իմ կովն է: Եվ տատիս հիշատակին անունը Մուռկա եմ դնելու: Մի տեսեք, թե ինչ գեղեցիկն է: Վերջինն էր: Ոչ ոք չէր ուզում վերցնել: Խսկ ես վերցրի, շատ դուր եկավ ինձ: Եթե այսուհետեւ ավելի դուր գա, ես կգնեմ:

Նա վերցրեց գերանդին ու գնաց ձմռան համար խոտ հնձելու: Խսկ կովը մոտեցավ պատուհանին ու սկսեց ծամել վարագույրները: Ծաղկամաններում դրված ծաղիկները կերավ: Շունը նկատեց այդ բանը.

— Եղ ի՞նչ ես անում: Ծաղիկներն ու վարագույրներն ուտո՞ւմ ես: Ինչպե՞ս հասկանանք, կարո՞՞ն է հիվա՞նդ ես: Չերմությո՞ւնոց չափենք: Չերմաշա՞փ դնենք:

Կովն այնպես է նայում նրան, կարծես ամեն ինչ հասկացել է, բայց մեկ էլ գլուխը միանգամից ներս է խոթում պատուհանից, քաշում է նոր սփոռոց եւ սկսում է ծամել: Ծարիկը զարմանքից նույնիսկ ուշաթափվում է: Հետո ուշրի է զայիս ու սկսում է սփոռոցի մյուս ծայրից էլ ինքը քաշել: Չի թողնում, որ կովը ծամի: Նա իրեն է քաշում, կովը՝ իրեն: Եվ ոչ մեկը բերանք չի կարողանում քաշել, որպեսզի սփոռոցը բաց չթողնի:

Այդ պահին Քերի Ֆեռողորը գնումներ կատարած վերադառնում է խանութից: Կատվի համար մատրոսկա էր գնել, իսկ Ծարիկի համար՝ մեղալներով վզնոց:

— Եղ ի՞նչ օյն եք դրել նոր սփոռոցի գլխին,— բղավում է Քերի Ֆեռողորը:— Գլխիս ուրախների եւ հնարամիտների ակո՞ւմբ եք սարքել, ինչ է:

Խսկ նրանք ծայն չեն հանում: Միայն աչքերն են չըել: Այսեղ Քերի Ֆեռողորը տեսավ, որ ո՞չ ծաղկամանների ծաղիկները կան, ո՞չ վարագույրները, եւ ամեն ինչ հասկացավ: Ծալվարի վրայից գոտին հանեց ու մի լավ մտրակեց հիմար կովին: Կովը, երեւում է, երես առած էր: Եղջուրները ցցած հարձակվեց Քերի Ֆեռողորի վրա: Քերի Ֆեռողորը փախավ: Բայց բանի որ շալվարն առանց գոտու էր մնացել, փաթաթվեց ոտքերին: Քիչ էր մնում, որ կովը հարու տար նրան:

Շունը կախվեց կովի պոչից, շթողեց, որ Քերի Ֆեռողորին հարու տա: Մեկ էլ հայտնվեց կատուն:

— Եղ ի՞նչ եք անում իմ կովին: Ես նրան չեմ բերել, որ պոչից քաշըշեք: Էլ զվարճանալու բան չունե՞ք:

Բայց Քերի Ֆեռողորն ամեն ինչ բացատրեց կատվին: Ծամծմված վարագույրները ցույց տվեց նրան: Խսկ շունը բաց չէր թողնում կովի պոչը. քիչ բան չի, մեկ էլ տեսար նոր օյին սարքեց:

— Քո կովին կապած պահիր,— ասաց Քեռի Ֆեռդորը:

Կատուն համառեց.

— Կովը հո շուն չի, որ կապեմ: Կովերը միշտ էլ ազատ ման են գալիս իրենց համար:

— Նորմալ կովերն են ազատ ման գալիս,— գոռաց Շարիկը:— Իսկ քո կովը խելազար է:— Եվ կովի պոչը բաց թողեց.

Կովը վազեց ուղիղ կատվի վրա: Խեղճ կատուն հազիվ խույս տվեց: Մազեց տանիք ու ասաց:

— Համաձայն եմ, համաձայն եմ: Որ այդքան հիմար է, կապենք:

Գլուխ վերեցորդ — «Առ ու փախիր» ճայակը

Եվ այսպես Քեռի Ֆեռդորն ապրեց գյուղում: Գյուղացիները սիրեցին նրան: Որովհետեւ երբեք պարապ-սարապ չէր նստում, ամբողջ ժամանակ գործ էր անում կամ էլ խաղում էր: Իսկ հետո հոգսերը ավելացան: Մարդիկ իմացան, որ Քեռի Ֆեռդորը կենդանիներ է սիրում, եւ սկսեցին նրա համար տարբեր կենդանիներ բերել: Երամից ես մնացած թռչուն լիներ, թե մոլորված նապաստակ, անմիջապես բռնում բերում էին Քեռի Ֆեռդորի մոտ: Իսկ նա խնամում էր, բուժում ու ազատ արձակում:

Մի անգամ նրանց մոտ մի ճայակ հայտնվեց: Աչքերը ոնց որ կոճակներ, կտուցը հաստիկ: Շատ զայրացկոտ ճայակ էր:

Քեռի Ֆեռդորը կերակրեց նրան եւ նստեցրեց պահարանի գլխին: Անունը դրեցին «Առ ու փախիր». ինչ աչքովն ընկներ՝ թռցնում էր, քարշ տալիս պահարանի վրա: Նույնիսկ զարթուցիչն էր քարշ տվել պահարանի վրա: Նրա մոտից ոչ մի քան հնարավոր չէր ետ վերցնել: Անմիջապես թեևերը տարածում էր, ֆշշացնում ու կտցահարում: Պահարանի վրա մի ամբողջ պահեստ էր գոյացել: Հետո մի քիչ մեծացավ, կազդուրվեց եւ սկսեց պատուհանից դուրս թռչել: Բայց երեկոյան անպայման վերադառնում էր: Եվ ոչ դատարկ ձեռքով: Կամ պահարանի քանայի էր բերում, կամ քացիչ, կամ երեխայի հագուստ: Մի անգամ նույնիսկ ծծակ էր բերել: Երեւի դրսում մանկասայլակի մեջ քնած երեխայից էր թռցրել: Քեռի Ֆեռդորը շատ էր վախենում ճայակի համար. վատ մարդիկ կարող էին հրացանով սպանել նրան կամ փայտով խփել:

Իսկ կատուն որոշեց ճայակին գործի դնել:

— Ի՞նչ ենք անտեղի կերակրում սրան: Թող մի օգուտ էլ ինքը տա:

Եվ սկսեց ճայակին խոսել սովորեցնել: Ամբողջ օրերով նստում էր կողքին եւ ասում.

— Ո՞վ է, ո՞վ է, ո՞վ է:

Շարիկը հարցնում է.

— Ինչ է, քան ու գործ չունե՞ս: Ավելի լավ է մի երգ սովորեցնես, կամ էլ ոտանավոր:

Կատուն պատասխանում է.

— Ես էլ կարող եմ երգել: Բայց դրամից օգուտ չկա:

— Իսկ քո «ով»-ից ի՞նչ օգուտ կա:

— Կա: Կզնանք անտառ ցախ հավաքելու, իսկ տանը ոչ ոք չի մնա: Ուզածդ մարդը կարող է մտնել տուն եւ մի որեւէ բան տանել: Բայց եթե մարդ զա, դուռը թակի, ճայակը հարցնի. «Ո՞վ է», թակողը կմտածի, որ տանը մարդ կա, եւ ոչինչ չի գողանա: «Պա՞րզ է:

— Բայց ինք էիր ասում, որ մեր տանը գողանալու բան չկա,— ասում է Շարիկը:— Դու նույնիսկ ինձ չէիր ուզում վերցնել:

— Եղ առաջ էր, որ ոչինչ չունեինք,— բացատրում է կատուն,— իսկ հիմա մենք զանձ ենք գտել:

Շարիկը համաձայնում է ու ինքն էլ կատվի հետ միասին սկսում է սովորեցնել ճայակին: Մի ամբողջ շաբաթ շարչարվեցին, վերջապես ճայակը սովորեց: «Ենց որ մեկը թակում էր դուռը կամ թփթփացնում արտասանդուղի վրա, ճայակն անմիջապես հարցնում էր.

— Ո՞վ է, ո՞վ է: Այդ ո՞վ է:

Ահա թե դրա հետեւանքն ինչ եղավ: Մի անգամ Ջերի Ֆեռդորը, Շարիկը եւ կատուն զնացին սունկ հավաքելու: Տանը ճայակից բացի ոչ ոք չկար: Գալիս է փոստատար Պեչկինը: Դուռը թակում է եւ լսում.

— Ո՞վ է:

Նա ասում է.

— Ես եմ, փոստատար Պեչկինը: «Մուրզիկա» ամսագիրն եմ քերել:

Ճայակը նորից է հարցնում:

— Ո՞վ է:

Փոստատարը նորից ասում է.

— Ես եմ, փոստատար Պեչկինը: «Մուրզիկա» ամսագիրն եմ քերել:

Սակայն դուռը ոչ ոք չի բացում: Փոստատարը նորից է թակում եւ նորից լսում.

— Ո՞վ է, Այդ ո՞վ է:

— Ո՞վ պիտի լինի, ես եմ, Փոստատար Պեչկինը: «Մուրզիկա» ամսագիրն եմ քերել:

Եվ ամբողջ օրն այդպես շարունակ:

— Թըխսկ—թըխսկ:

— Ո՞վ է:

— Ես եմ, փոստատար Պեչկինը, «Մուրզիկա» ամսագիրն եմ քերել:

— Թըխսկ—թըխսկ:

— Ո՞վ է:

— Ես եմ, փոստատար Պեչկինը: «Մուրզիկա» ամսագիրն եմ քերել:

Ի վերջո, Պեչկինը վաս է զգում: «Հայից ընկնում է: Նա նստում է արտասանդուղին եւ ինքն է սկսում հարցնել.

— Ո՞վ է:

Իսկ ճայակը պատասխանում է.

— Ես եմ, փոստատար Պեչկինը: «Մուրզիկա» ամսագիրն եմ քերել:

Պեչկինը նորից է հարցնում:

— Ո՞վ է:

Ճայակը նորից պատասխանում է.

— Ես եմ, փոստատար Պեչկինը: «Մուրզիկա» ամսագիրն եմ քերել:

Իսկ երբ Քեռի Ֆեռդորը, Մատրոսկինն ու Շարիկը տուն վերադարձան, շատ զարմացան: Փոստատարը, արտասանդուղին նստած, անընդհատ նույն բանն էր կրկնում. «Ո՞վ է» հա «ո՞վ է»:

Իսկ տնից միեւնույն բանն էր լսվում.

— Ես եմ, փոստատար Պեչկինը: «Մուրզիկա» ամսագիրն եմ քերել:

Փոստատարին հազիվիազ ուշքի քերեցին եւ թեյ խմեցրին: Իսկ նա երբ իմացավ, թե ինչն ինչոց է, չնեղացավ: Միայն ձեռքը թափ տվեց ու երկու հատ կոնֆետ դրեց զրպանը:

Գլուխ յոթերորդ — Տրակ-տրակ Միույսն

Պեչկինի քերած ամսագրի մեջ մի բացիկ կար: Բացիկի վրա զրված էր. «Վաղը խնդրում ենք տանք լինեք: Ձեր անունով տրակտոր է ստացվել: Երկաթուղային կայարանի պետ Նեսիդորով»:

Իսկ ներքեւում գեղեցիկ տառերով զրված էր.

Մեր երկրում երկաթուղիներ շատ շատ կան

Դա բոլորին ուրախացրեց: Հատկապես Շարիկին: Ու նրանք սկսեցին սպասել տրակտորին:

Վերջապես մի մեծ մեքենայով քերեցին տրակտորն ու իջեցրին տան մոտ: Վարորդը Քեռի Ֆեռդորին խնդրեց ստորագրել եւ մի ծրար տվեց նրան: Ծրարի մեջ նամակ ու մի զրբոյկ կար տրակտորը վարելու մասին: Նամակում զրված էր.

«Հարգելի Քեռի Ֆեռդոր (տղա).

Դու խնդրել էիր, որ ուղարկեինք մի այնախի տրակտոր, որը ոչ լրիվ իսկական լիներ, ոչ լրիվ խաղալիք: Բայց շատ ուրախ լիներ: Ուղարկում ենք այդպիսի մի տրակտոր: Գործարանի ամենաուրախ տրակտորը: Սա փորձնական նմուշ է: Բենզինի կարիք չի գգում: Աշխատում է մյթերքներով:

Տրակտորի մասին ձեր կարծիքը խնդրում ենք ուղարկեք զրծարան: Խորին հարգանքներով՝ ինժեներ Տյապկին (տրակտորի գյուտարար):»

Հետո Քեռի Ֆեռդորը վերցրեց զրբոյկն ու սկսեց կարդալ.

Երկաթատրակտորեղենի զրծարան: Տրակ-տրակ Միույսն Մթերային: 20 ձ. ու.

Կարդաց ու ասում է.

— Ոչինչ չեմ հասկանում: Ի՞նչ է նշանակում «տրակ-տրակ»: Ի՞նչ է նշանակում «ձ. ու.»:

— Ի՞նչ կա չհասկանալու, — ասում է Կատուն: — Հասարակ քան է, ոնց որ երկու անգամ երկու: «Տրակ-տրակը» տրակտոր քառի կրճատ ձեւն է: Իսկ «Միտյա» նշանակում է «մոդելը ինժեներ Տյապկինին է»: Որը քեզ նամակ է գրել:

— Իսկ ի՞նչ է նշանակում քսան «ձ. ու.», — հարցնում է Քետի Ֆեռդորը:

— «Ձ. ու.» նշանակում է ձիառութ: Վյսինքն՝ տրակտորը կհաղթի քսան ձիերի. եթե նրանք մի կողմի վրա քաշեն, տրակտորը՝ մյուս կողմի վրա:

— Այդ դեպքում ինչքա՞ն խոտ է հարկավոր նրան, — հառաչեց Շարիկը:

— Նրան խոտ հարկավոր չի: Գրված է, չէ՞ աշխատում է մթերքներով:

Քետի Ֆեռդորը նույնիսկ զարմացավ:

— Վյդքան քան որտեղից գիտես, այ Մատրոսկին, համ տրակտորի մասին, համ ազգանվան, համ ձիառութի:

— Իմ չափ ապրեք, դուք ել շատ քան կիմանաք, — ասում է կատուն: — Որտեղ ասես որ չեմ ենել: Մեկ մի տիրոջ մոտ, մեկ՝ մի ուրիշի: Մեկ՝ գրադարանում, մեկ՝ նույնիսկ խնայդրամարկղում: Ես այնքան քան եմ տեսել կյանքումս, որ մի ամբողջ կատվային հանրագիտարան կարող եմ կազմել: Դե տեսնում եք, դուք այստեղ դատարկ-մատարկ խոտում եք, իսկ իմ Մուռկան մնաց առանց կթելու:

Նա գնաց, իսկ տղան Շարիկի հետ սկսեց տրակ-տրակը գործի ցցել: Սկսեց ապուր լցնել տրակտորի մեջ ու կոտևտներ խցկել ուղղակի քաքի մեջ: Տրակտորն սկսեց ուժգին դողոալ:

Նստեցին տրակտոր եւ գնացին գյուղ: Գնաց, գնաց Միտյան, գյուղով մեկ շրջեց, մեկ ել հանկարծ մի տան առաջ կանգ առավ:

— Ինչո՞ւ կանգ առավ, — հարցնում է Քետի Ֆեռդորը: — Չինի՞ վառելանյութը վերջացել է:

— Բոլորովին ել չի վերջացել: Ուղղակի կարկանդակի հոտ է առել:

— Ի՞նչ կարկանդակ:

— Սովորական: Այ, այն տանը կարկանդակ են թխում:

— Հիմա ի՞նչ պետք է անենք:

— Զգիտեմ, — ասում է Շարիկը: — Ճիշտն ասած, այնքան լավ հոտ է զալիս, որ ես ել չեմ ուզում շարժվել:

— Այ թե տրակտոր եմ զնել, հա՛, — ասում է Քետի Ֆեռդորը: — Ինչ է, բոլոր տների ու ճաշարանների մոտ հո կանգ չե՞նք առնելու: Սա ոչ թե տրակտոր է, այլ գետաձի: Այս անտակ տրակտ-տրակը: Այ ոչ ու փուչ լինի եղ ինժեներ Տյապկինը, հա՛:

Ու նրանք ստիպված եղան մտնել տուն եւ կարկանդակ խնդրել:

Մատրոսկինը երբ իմացավ, բարկացավ Քետի Ֆեռդորի վրա.

— Ասացի ոչինչ մի՛ զնեք, չսեցիք: Հիմա մենք եղ տրակ-տրակի փորը չենք կարող լցնել:

Բայց հետո կատուն հանգստացավ.

— Ոչինչ, Քեռի Ֆեոդոր, հույսի մի՛ կտրիր: Լավ է, որ ես քեզ հետ եմ: Չո տրակտորի լեզուն էլ կզտնենք: Կարթից կախ տված նրբերշիկ կպահենք նրա առաջ: Նրբերշիկի ետեւից կգնա եւ մեզ էլ կտանի:

Աղյախ էլ արեցին: Եվ շուտով տրակտորն սկսեց խելոքանալ: Իսկ ընդհանրապես նա ուրախ տրակտոր էր: Խօֆիկը պլաստմասայից էր շինված, երկնագույն, իսկ անիվները մետաղից էին: Եվ պետք էր յուղել ոչ թե մերենայի յուղով, այլ՝ արեւածաղիկի:

Բայց Մուռկա կովը նրանց հոգալ ավելացրեց:

Գլուխ ուղերդորդ — Գայլուկը ծաղկում է

Մուռկա կովը հիմար էր եւ երես առած: Բայց կաթ շատ էր տալիս: Օր օրի վրա ավելի ու ավելի շատ: Բոլոր դույլերը, բոլոր բանկաները լիքն էին կաթով: Նոյնիսկ ակվարիումն էր կաթով լցված: Զկները մնչըլ լող էին տալիս:

Մի անգամ Քեռի Ֆեոդորն արթնանում է ու տեսնում, որ լվացարանի մեջ ոչ թե ջուր է լցրած, այլ թթված կաթ: Նա կանչում է կատվին եւ ասում.

— Ես ի՞նչ ես անում: Հիմա ինչպե՞ս պետք է լվացվենք:

Կատուն մոռայլ պատասխանում է.

— Գետում էլ կարելի է լվացվել:

— Հա, բա ձմռա՞նը: Էլի՞ գետում լվացվենք:

— Զմռանը կարելի է բոլորովին չլվացվել: Չորս կողմք ձյուն է, չես կեղտոտվի: Իսկ ընդհանրապես ոմանք իրենց երեսը լեզվով են լվանում:

— Ոմանք մկներ էլ են ուտում,— ասում է Քեռի Ֆեոդորը:— Իսկ լվացարանի մեջ այլեւս թթված կաթ չտեսնեմ:

Կատուն մտածում է եւ ասում.

— Լավ: Ես հորժուկ կպահեմ: Թթված կաթը թող խմի:

Իսկ ճաշին դարձյան նորություններ կային: Եվ նորից Մուռկայի հետ կապված: Դաշտից, չգիտես ինչու, ետեւի ոտքերի վրա է զալիս: Բերանում է՝ մի ծաղիկ: Զեռքերը կանթած գալիս է իր համար ու երգում.

Հիշում են՝ լու, լու, շահել էի դեռ,
Մեր բանակը արշավում էր ինչ-որ տեղ ...

Միայն թե բառերը չեր կարողանում արտասանել, ասում էր.

Մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-
Մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-

Ու զլիսի վրա էլ զլիարկի պես ամապ էր նստել: Շարիկը հարցնում է.

— Ինչո՞ւ է այդպես ուրախացել: Տո՞ն է, ինչ է, նրա համար:

— Ի՞նչ տոն,— ասում է Քեռի Ֆեոդորը:

— Գուցե ծննդյան օրն է: Կամ կեֆիրի օր է: Կամ գուցե կովերի Նոր տարին է:

— Ի՞նչ գործ ունի այստեղ Նոր տարին,— ասում է Մատրոսկինը: Ուղղակի մոլեխինգ է կերել կամ Էլ գայլուկ:

Իսկ կովը վագեց ու, շրջիկ, զարկեց պատին: «Հազիվհազ կարողացան գոմը մտցնել: Մատրոսկինը զնաց կթելու: Դուքս Եկավ հինգ բռպեից հետո, բայց նրա հետ էլ էր ինչ-որ տարօրինակ բան կատարվել: Մատրոսկան այնպես էր հազել, կարծես զոգնոց լիներ առջեւից կապած, կովկիթն Էլ սաղավարտի պես դրել էր զիսին: Եվ ինչ-որ անմիտ մի բան էր երգում.

<i>Նալաստի</i>	<i>եմ</i>	<i>ե՛ս,</i>
<i>Չբունում</i>	<i>եմ,</i>	<i>ուե՛ս,</i>
<i>Օր-օրի,</i>	<i>ամեն</i>	<i>օ՛ր,</i>
<i>Վլիրներին</i>		<i>շորո՛ր:</i>

Երեւում է, ուրախ կաթ է խմել: Շարիկը Քեռի Ֆեռդորին ասում է.

— Կովը գժվել էր, քիչ է, հիմա Էլ կատու է խելքը թոցրել: «Շտապ օգնություն» պետք է կանչել:

— Մի քիչ Էլ սպասենք,— ասում է Քեռի Ֆեռդորը:— Գուցե խելքի են զալիս:

Ի՞նչ խելքի զալ: Մուռկան գոմում Օզինսկու պոլոնեզն է բառաչում.

Սու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-:

Սու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-մու-:

Իսկ կատուն սկսեց ինչ-որ ավելի տարօրինակ բան երգել.

<i>Մայրիկն</i>	<i>ուներ</i>	<i>երկու</i>	<i>հայլ,</i>
<i>Երկու</i>	<i>սիրուն,</i>	<i>ուրախ</i>	<i>սա՛զ,</i>
<i>Մեկը</i>	<i>մոխրազույն,</i>	<i>մյուսն</i>	<i>սպիտակ.</i>
<i>Դեսյան ու Մարուսյան:</i>			

</i>

Եվ ինքն Էլ գլուխը, շը՛խկ, խփեց պատին:

Այստեղ արդեն Քեռի Ֆեռդորն էլ անհանգստացավ.

— Շարիկ, վերցրու այս երկու կոպեկանոցը եւ «Շտապ օգնություն» կանչիր:

Շարիկը վագեց զանգահարելու, իսկ կովն ու կատուն քիչ-քիչ սկսեցին ուշքի զալ: Երգելն ու բառաչելը դադարեցրին: Կատուն բռնեց գլուխն ու ասաց.

— Այ թե կաթ է տալիս մեր կովը: Վերցնես այդ կաթը խտացնես ու կռվի ժամանակ թշնամու բանակին ուղարկես, որ բոլոր զինվորները խելազարվեն ու խրամատներից դուրս թռչեն:

Այդ պահին նրանց է մոտենում փոստատար Պեչկինը: Կարմրատակած եւ ուրախ:

— Լսեցեք, թե ինչ հոդված եմ կարդացել թերթում: Մի տղայի մասին: Աչքերը շագանակգույն են, իսկ մազերն առջեւից այնպես են ցցված, կարծես կովը լիզած լինի: Բոյն էլ մեկ մետր քան սանտիմետր է:

— Հետո ի՞նչ,— ասում է կատուն:— Քի՞չ կան այդպիսի տղաներ:

— Կարող է եւ քիչ չեն,— պատասխանում է փոստատարը,— բայց այդ տղան տնից հեռացել է: Իսկ ծնողներն անհանգստանում են, թե ինչ է պատահել նրան: Նույնիսկ պարզեւ են խոստացել գտնողին: Գուցե հեծանիվ տան: Իսկ ինձ, փոստը բաժանելու համար, ուղղակի շատ է պետք հեծանիվը: Ես նույնիսկ մետք եմ քերել. պետք է ձեր տիրոջ բոյը չափեմ:

Շարիկը հենց որ լսեց, սիրտը բռնեց: Հիմա Պեչկինը Քեռի Ֆեռդորի բոյը կչափի ու նրան տուն կտանի, իսկ ի՞նչ կանեն ինքն ու կատուն: Կորած են:

Իսկ կատուն իրեն չի կորցնում եւ ասում է.

— Չափել միշտ կարելի է: Նախ մի քիչ կաթ խմեք: Նոր եմ կթել կովը: Իմ Մուռկային: Փոստատարը համաձայնում է.

— Հաճույքով կխմեմ: Շատ օգտակար բան է: Այդ մասին նույնիսկ թերթերում են գրում: Տվեր ինձ ամենամեծ գավաթը:

Կատուն տուն վազեց ու շտապ բերեց ամենամեծ գավաթը: Կաթը լցրեց ու տվեց Պեչկինին: Հենց որ Պեչկինը խմեց կաթը, աչքերը չուց ու սկսեց երգել: Ո՞նց է երգում:

Երբ
Զահել

կառապան
Էի

Էի
եւ

փոստում,
ուժեղ:

Եվ գլուխը տվեց պատին՝ շրջինկ:

Իսկ ճայակը տնից հարցնում է.

— Ո՞վ է: Այդ ո՞վ է:

Փոստատարը պատասխանում է.

— Ես եմ, փոստատար Պեչկինը: Մետք եմ բերել: Պետք է ձեր կաթը չափեմ: Տվեր ինձ ամենամեծ գավաթը:

Այդ պահին եկավ «շտապ օգնությունը»: Երկու սանիտար դուրս եկան եւ հարցնում են.

— Ձեզնից ո՞վ է խելքը թոցրել:

Պեչկինը պատասխանում է.

— Տունն է խելքը թոցրել: Ինձ վրա է հարձակվում:

Սանիտարները վերցրին նրան եւ տարան դեպի մերենան: Եվ ասացին.

— Գայլուկը հիմա ծաղկում է: Շատերն են գժվում: Հատկապես կովերը:

Երբ նրանք գնացին, Քեռի Ֆեոդորը կատվին ասաց.

— Այդ կաթը մի տեղ թափիր: Որ էլ փորձանքի չգանք:

Կատուն ափսոսում է կաթը թափի: Իբր մեքենային ոչինչ չի պատահի: Տրակտորները շեն գժվում: Եվ ամբողջ կաթը լցնում է բարի մեջ: Ուղղակի դույլից:

Միտյան կանգնեց, կանգնեց, հետո դռդրացրեց եւ ալացավ կատվի վրա: Կատուն դույլը շալլտեց եւ շտապ ծառը մազլցեց: Իսկ Միտյան սկսեց դույլով ֆուտրով խաղալ: Անքան խաղաց, մինչեւ դույլը լավաշ դարձրեց: Այ թե ինչպիսին է այդ ինժեներ Տյապկինի մողելը:

Հետո էլ գնաց գյուղում չարություն անելու: Մոլախոտերի բուկն էր լցնում, հավերի ետեւից էր ընկնում: Հազար ու մի երգեր դրդացնում: Իսկ վերջում էլ մտավ ջուրը լողանալու: Քիչ էր մնում խեղդվեր: Հազիվ դուրս եկավ ջրից, ամաչում էր: Մոտեցավ տանն ու կանգնեց իր տեղում: Ոչ մեկի վրա չէր նայում: Ինքն իրեն հայինում էր:

Քեռի Ֆեոդորը շատ բարկացավ Մատրոսկինի վրա եւ անկյուն կանգնեցրեց:

— Մյուս անգամ կանես այն, ինչ քեզ ասում են:

Շարիկը ծիծաղեց կատվի վրա: Բայց Քեռի Ֆեոդորն ասաց.

— Լա՞վ, լա՞վ: Անկյուն կանգնած մարդու վրա չեն ծիծաղի:

Իհարկե, Մատրոսկինը կատու էր, ոչ թե մարդ: Բայց, միեւնույն է, Քեռի Ֆեոդորի համար նա մարդ էր:

Իսկ կովին էի արկածներ պատահեցին: Այն էլ ոչ քիչ:

Գլուխ իններորդ — Զեր որդի՝ Քեռի Ֆարիկ

Հաջորդ օրը Քեռի Ֆեոդորը որոշեց նամակ գրել, որպեսզի հայրիկն ու մայրիկը շանհանգստանան: Որովհետեւ նրանց շատ էր սիրում: Իսկ նրանք չգիտեին, թե որտեղ է ինքը, ինչ է անում: Եվ, իհարկե, անհանգստանում էին:

Նստում է Քեռի Ֆեոդորն ու գրում.

«Իմ հայրիկ ու մայրիկ:

Ես լավ եմ ապրում: Ուղղակի հրաշալի: Ես իմ տունն ունեմ: Շատ տաք է: Մի սենյակ է եւ մի խոհանոց: Իսկ վերջերս մենք գանձ գտանք եւ կով գնեցինք: Եվ տրակտոր գնեցինք՝ տրակ-տրակ Միտյային: Լավ տրակտոր է, միայն թե քենզին չի սիրում, ապուր է սիրում:

Հայրիկ ու մայրիկ, ես առանց ձեզ շատ եմ տիրում: Մանավանդ երեկոները: Բայց չեմ ասի, թե որտեղ եմ ապրում: Թե չէ ինձ կտանեք, իսկ Մատրոսկինն ու Շարիկը կկորչեն»:

Այդ պահին Քեռի Ֆեոդորը տեսավ, որ երեխաները դաշտում օդապարիկ են բաց թողնում: Եվ վազեց նրանց մոտ: Իսկ կատվին պատվիրեց իր փոխարեն վերջացնել կիսատ թողած նամակը: Կատուն վերցրեց մատիտը եւ գրեց:

«Մենք մի տաք վառարան էլ ունենք: Ես շատ եմ սիրում նրա վրա հանգստանալ: Արողջությունս այնքան է լավ չէ. մեկ թաթերս են ջարդվում, մեկ պոչս է քարշ գալիս: Որովհետեւ, սիրելի հայրիկ ու մայրիկ, կյանքս ծանր է եղել, լի զրկանքներով ու վոնդումներով: Բայց իհմա ամեն ինչ այլ կերպ է դասավորվել: Համ երշիկ ունեմ, համ էլ

միշտ թասով լիքը թարմ կաթ՝ հատակին դրված: Խմիր, որքան կուզես: Նոյնիսկ մկներին տեսնել չեմ ուզում: Ես նրանց հիմա, հենց այնպես, հաճույքի համար եմ որսում: Կարթով կամ փոշեծծիչով բներից դուրս եմ քաշում ու տանում դաշտ: Իսկ ցերեկները սիրում եմ տանիքը մազցել: Եվ այնտեղ աչքերս ջռում եմ, բեղերս ուղղում ու գժի պես արեւառվում: Հպսում եմ ինձ ու արեւի տակ չորանում»:

Այդ պահին կատուն լսեց, թե մկներն ինչպես են հատակի տակ ճանկուտում: Զայն տվեց Շարիկին ու փոշեծծիչն առած վազեց մտավ հատակի տակ: Շարիկը մատիտն առավ ատամների մեջ ու շարունակեց նամակը.

«Վյո քանի օրը մազերս սկսել են թափվել: Հին բուրդն այնպես է թափվում վրայցիս, որ տուն մտնել չի լինում: Բայց փոխարենը նորն է աճում՝ մարուր, մետաքսյա: Ուղղակի ոնց որ կարակուլ... մի քիչ էլ ձայնս է խռպոտել: Անցնող-դարձողը շատ է, դե բոլորի վրա էլ հաշում եմ: Մի ժամ, երկու ժամ հաշում եմ, հետո ոչ թե հաշոց, այլ մի տեսակ սուլոց ու խլթիւթոց է դուրս գալիս կոկորդից:

Սիրելի հայրիկ ու մայրիկ, ես անճանաչելի եմ դարձել: Պոչս ոլորված, ականջներս ցից-ցից, քիշու սառն է ու բուրդս երկարած: Հիմա ձմռանը ծյան վրա էլ կարող եմ քնել: Խանութ ինքս եմ գնում: Վաճառողները բոլորը ճանաչում են ինձ: Ուսկրները ծրի են տալիս... Վյոնպես որ դուք ինձ համար մի՛ անհանգստացեք: Վյոնպես եմ կազդուրվել, որ՝ ո՞ւիս: Եթե հաջողվի ցուցահանդես ընկնել, բոլոր մեղաներն ինձ համար ապահովված են: Ե՛վ գեղեցկության, ե՛ւ խելացիության:

Յտեսություն: Ձեր որդի՝ Քեռի Շարիկ:

Հետո նա «Շարիկը» ուզում էր դարձնել «Ֆեռոր»: Բայց ստացվեց անհասկանալի մի քան.

«Յտեսություն: Ձեր որդի՝ Քեռի Ֆարիկ»:

Նա ու Մատրոսկինը ծրաբը փակեցին, հասցեն գրեցին, եւ Շարիկն ատամներով բռնած տարավ փոստարկել:

Բայց նամակը փոստարկում երկար մնաց: Որովհետեւ փոստատար Պեչկինը մեկուսարանում էր: Ակզրում նա չէր ուզում այնտեղ մնալ: Ասում էր, թե ինքը չի գժվել, Քեռի Ֆեռորի տունն է գժվել, որ սկսել է պոզահարել:

Իսկ հետո մեկուսարանը նրան դուր եկավ: Նամակներ բաժանելու հարկ չկար, եւ լավ կերակրում էին: Վյոնեղ ծանոթացավ նաև մի հաշվապահի հետ: Վյո հաշվապահին երեխաներն էին հիվանդանոցի դուռը հասցրել: Եվ նա ամբողջ օրը դաստիարակում էր Պեչկինին: Ասում էր.

— Պեչկին, մի՛ ցատկուտիր մահճակալի վրա:

— Պեչկին, գլուխող դուրս մի՛ հանիր պատուհանից:

— Պեչկին, կոտլետներով մի խփիր ընկերներիդ:

Թեեւ Պեչկինը ոչ պատուհանից դուրս էր նայում, ոչ մահճակալի վրա էր ցատկուտում, ոչ էլ կոտլետներ էր շարսում ընկերների վրա:

Բայց Պեչկինը նեղացել էր Քեռի Ֆեռորից: Նա ասում էր.

— Որոշ մարդիկ տանը շներ ու կատուներ են պահում, իսկ ես մի հեծանիվ ել չունեմ:

Բայց դա հետո էր: Առաջմ նա պառկած էր մեկուսարանում, նամակն էլ մնում էր փոստարկում ընկած:

Գլուխ տասներորդ — Շարիկը զնում է անտառ

Քերի Ֆեռդորն ու կատուն ապրում էին տանը: Իսկ Շարիկը վագվզում էր հողամասում կամ էլ նստում էր բնում: Բնում էլ քնում էր: Նա միայն ճաշելու համար էր տուն գալիս կամ հենց այնպես, որպես հյուր: Եվ ահա մի օր իր բնում նստած մտածում է.

«Կատուն իր համար կով զնեց: Քերի Ֆեռդորը՝ տրակտոր: Իսկ ես ինչո՞վ եմ պակաս նրանցից: Ժամանակն է, որ ես էլ հրացան զնեմ ինձ երջանիկ զգալու համար: Քանի դեռ փող կա»:

Քերի Ֆեռդորը համոզում էր նրան, որ հրացան չգնի, մեղք են գազանները: Կատուն էլ էր համոզում փողն էր ափսոսում: Իսկ շունը լսել անգամ չէր ուզում:

— Հեռացեք,— ասում էր,— ձեր գործը չէ: Իմ մեջ արթնանում է բնազդը: Գազանները նրա համար են, որ նրանց որսան: Ժամանակին ես դա չեմ հասկացել, որովհետեւ վատ եմ ապրել: Իսկ հիմա, երբ վիճակս լավ է, անտառն ինձ ուղղակի ձգում է:

Նա զնում է խանութ եւ հրացան զնում: Փամփուշտներ ել, եւ որսորդական մի պայուսակ, որ գազաններին մեջը լցնի:

— Իրիկնադեմին սպասեք ինձ,— ասում է Շարիկը:— Ես ձեզ համար մի որեւէ համեղ որս կրերեմ:

Նա գյուղից դուրս է գալիս ու զնում անտառ: Տեսնում է, մի գյուղացի սայլին նստած զնում է: Գյուղացին ասում է.

— Որսորդ, նստիր, տանեմ քեզ:

Շարիկը նստում է սայլին, թաթերը կախ զցում: Գյուղացին հարցնում է.

— Լա՞վ ես կրակում, բարեկամ:

— Իհարկե,— ասում է Շարիկը:

— Իսկ եթե զիխարկս վեր նետեմ, կարո՞ղ ես խփել:

Շարիկը կանգնում է ետեւի թաթերին եւ հրացանը պատրաստում:

— Նետեք ձեր զիխարկը,— ասում է,— հիմա դրանից բան չի մնա: Ամբողջը մաղ կդարձնեմ:

Սայլապանը հանում է զիխարկն ու օդ նետում: Բարձր-բարձր, հասնում է ամպերին: Շարիկը որ չի կրակում, ձին իրտնում է ու փախչում: Սայլակն էլ, իհարկե, նրա ետեւից: Անսպասելիությունից Շարիկը չի կարողանում ոտքի վրա մնալ ու ոստյունով օդ է բարձրանում: Մեկ էլ շրջ' մի, ուղիղ ճանապարհի մեջտեղը: Այ քեզ որսորդություն:

Մնացած ճանապարհը նա ոտքով է զնում: Մտնում է անտառ, տեսնում է՝ բացատում մի նապաստակ է նստած: Հրացանը լցնում է, պայուսակը պատրաստում եւ սկսում է գաղտագողի մոտենալ:

— Տես, հիմա ես սրան ոնց եմ խփում:

Նապաստակը տեսնում է նրան եւ փախչում: Շարիկն էլ նրա ետեւից: Բայց սայթաքում է ու խճճվում պայուսակի մեջ, որով պետք է որսը տուն տաներ: Նստել է պայուսակի մեջ եւ մտածում է.

«Այ քեզ որսորդություն: Ինչ է, հիմա ինքս ի՞նձ պետք է տուն տանեմ: Դուրս է զալիս, որ ես համ որսն եմ, համ էլ որսորդը: Այ թե կծիծաղեն վրաս...»

Շարիկը մի կերպ դուրս է արձնում պայուսակից եւ գնում նապաստակի հետքերով: Հրացանը ուսին, քիթը գետնին կպցրած: Հասնելով մի բարակ առվակի, տեսնում է նապաստակը իր համար ցատկուում է մյուս ափին: Նա հրացանը ատամներով բռնած, նետվում է ջուրը. ին չէ՞ր կարող նապաստակին ձեռքից բաց թողնել: Իսկ հրացանը ծանր էր, քիչ էր մնում Շարիկին ջրի տակ քաշեր: Շարիկը մեկ էլ տեսնում է արդեն ջրի տակ է:

«Ի՞նչ է դուրս զալիս,— մտածում է նա:— Սա արդեն ոչ թե որսորդություն է, այլ՝ ձկնորսություն:»

Որոշում է դեն նետի հրացանը եւ արագ դուրս գա ջրի երես:

«Դե լավ, դժբախտ նապաստակ, դեռ քեզ ցույց կտամ: Առանց հրացանի էլ ես քեզ կրոնեմ: Վկանջներդ այնպես ոյորեմ, որ իմանաս, թե ինչ է նշանակում որսորդներին ձեռ առնել:»

Լողում է նա, լողում, բայց ոչ մի կերպ չի կարողանում ջրի երես դուրս գալ: Խճճվել է հրացանի փոլի ու պայուսակի մեջ: Շարիկի վերջը եկել է:

Բայց այդ պահին զգում է, որ մեկն իր օձիքից բռնած վեր է քաշում: Դա մի ծեր կուլը էր, որը մոտակայքում ամբարտակ էր շինում: Ջրից դուրս է հանում Շարիկին ու ասում է.

— Ել բան ու գործ չունեմ, էի, ամեն տեսակ շներ պետք է հանեմ ջրից:

Շարիկը պատասխանում է.

— Իսկ ես չէի խնդրում, որ ինձ հանես: Գուցե ես չէի խեղդվում: Կարող է ստորգրյա լողով եմ զբաղվում: Ես դեռ չեմ էլ որոշել, թե ինչ էի անում այնտեղ, հատակին:

Մինչդեռ այնքան վատ է զգում, որ քիչ է մնում օգնություն կանչի: Եվ նրանից շատրվանի նման ջուր է թափվում, իսկ ինքը ամաչում է կուղբին նայել: Դե, իհարկե, եկել է զազաններ որսալու, այնինչ նրանք իր կյանքը փրկեցին: Գետի ափով տուն է գնում: Թրջված հավի պես, գլուխը կախ զցած: Քարշ է տալիս հրացանը եւ մտածում.

«Որսի հարցում ոնց որ թե բախսու չի բերում: Նախ սայլից ցած ընկա: Հետո խճճվեցի որսորդական պայուսակի մեջ: Իսկ վերջում էլ քիչ մնաց խեղդվեմ: Ինձ դուր չի զալիս այսպիսի որսորդությունը: Վկելի լավ է ձուկ որսամ: Ինձ համար կարթ կզնեմ, թիթեռացանց: Բուտերբրոդ կվերցնեմ հետո եւ ափին կնսատեմ: Կլինեմ ոչ թե որսորդական շուն, այլ՝ ձկնորսական: Իսկ գազանների վրա կրակել չեմ ուզում: Նրանց միայն կփրկեմ:»

Սակայն ասելը հեշտ է, իսկ անելը՝ դժվար: Այսր նա որսորդական շուն էր, ոչ թե մեկ ուրիշ բան:

Գլուխ տասնմեկերորդ — Կուղբիկը

Իսկ Քերի Ֆեռդորն ու Մատրոսկինը, տանը նստած, սպասում են, թե Շարիկը երբ է վերադառնալու որսից: Քերի Ֆեռդորը կուտաման էր պատրաստում թռչունների համար, իսկ կատուն տնտեսությամբ էր զբաղված՝ կտրված կոճակներն էր կարում, գուլպաները կարկատում:

Մութն արդեն ընկել էր, երբ Շարիկը եկավ: «Պայուսակը շրջեց ու թափ տվեց սեղանի վրա: Մի գազանիկ դուրս թռավ: Փոքրիկ, փափկամազիկ, աչքերը թախծոտ, իսկ պոչը՝ թիականման:

— Տեսեք, թե ինչ եմ բերել:

— Որտեղից ես գտել,— հարցնում է Քերի Ֆեռդորը:

— Գետից հանեցի: Ավին նստած էր, հենց որ ինձ տեսավ՝ թըմփ, ջրի մեջ: Վախից: Հազիվհազ կարողացա բռնել: Թե չէ խեղդվելու էր: Դեռ շատ փոքրիկ է:

Կատուն լսում է, լսում ու ասում է.

— Այ թե հաստագլուխն ես: Այս սա կուղբիկ է: Ջրում է ապրում: Այնտեղ է նրա տունը: Իսկ դու, կարելի է ասել, նրան տնից ես դուրս քաշել:

Շունը պատասխանում է.

— Ի՞նչ իմանայի, որ ջրում է ապրում: Ես կարծեցի, թե ուզում է խեղդվել: Տեսեք, ինչպես եմ թրջվել:

— Տեսնել չեմ ուզում,— ասում է կատուն:— Որսորդիս տեսե՛ք, գազանների մասին ոչ մի բան չգիտի:— Ու թռավ վառարանի վրա:

Իսկ կուղբիկը նստել է ու աչքերը չոած՝ նայում է շուրջը: Ոչինչ չի հասկանում: Քերի Ֆեռդորը նրան տաք կաթ տվեց: Կուղբիկը խմեց կաթը եւ աչքերն սկսեցին փակվել:

— Որտե՛ղ քննեցնենք սրան,— հարցնում է տղան:

— Ինչպե՞ս թե որտեղ,— ասում է շունը:— Եթե ջրում է ապրում, ուրեմն պետք է թասի մեջ դնել:

— Քեզ է պետք թասի մեջ դնել,— գոռում է Մատրոսկինը:— Որպեսզի մի քիչ խելքի զաս:

Ծան տրամադրությունն ընկավ:

— Այս ինքդ ասացիր, թե նա ջրում է ապրում:

— Ջրում միայն լող է տալիս, իսկ տունը գետի ափին է,— բացատրում է կատուն:

Քերի Ֆեռդորը վերցրեց կուղբիկին եւ դրեց պահարանի մեջ, կոշիկների համար նախատեսված դարակում: Կուղբիկն անմիջապես քնեց: Շունն էլ զնաց իր բնում քնելու: Նա սովոր չէր մահճակալին երկար պառկել: Գյուղական շուն էր ու բոլորովին էլ երես առած չէր:

Առավոտյան Քերի Ֆեռդորն արթնացավ տարօրինակ մի ձայնից: Կարծես մեկը փայտ է սղոցում խըզ... խըզ...

Եվ նորից՝ խըզ... խըզ...

Վեր կացավ մահճակալից եւ ինչ տեսնի: Տունը հյուսնի արհեստանոց է դարձել: Չորս կողմը տաշեղներ, փայտի կտորտանք ու թեփ է շաղ տված: Իսկ սեղանը, որի վրա ճաշում էին, կարծես չի էլ եղել: Կուղբիկը նստել է տաշեղների կույտի վրա եւ սեղանի ոտքն է սղոցում:

Կատուն վառարանի վրայից կախ զցեց թաթերն ու ասում է.

— Տես, թե քո Շարիկը ինչ դրեց մեր գլխին: Հիմա ստիպված ենք նոր սեղան գնել: Լավ է, դեռ երեկոյան աման-չամանը հավաքել էի սեղանի վրայից: Թե չէ մնալու էինք առանց ակսեի:

Կանչեցին Շարիկին:

— Արի տես, թե ինչ ես դրել մեր գլխին:

— Բա որ իմ մահճակալը սորցեր,— ասում է Քերի Ֆեռոդորը,— զիշերվա կեսին շրիկալու էի հատակին: Շնորհակալ եմ քեզանից:

Նա որսորդական պայուսակը տվեց Շարիկին ու ասում է.

— Հենց հիմա, առանց նախաճաշելու վազիր գետ ու կուղբիկին դիր այնտեղ, որտեղից վերցրել ես: Տես, հա՛, գետից էլ ոչինչ չորսաս: Մենք այստեղ միլիոնատեր չենք քեզ համար:

Շարիկը կուղբիկին դրեց պայուսակը եւ սուս ու փուս վազեց գետափ: Արդեն ինքն էլ էր փոշմանել, որ բոնել էր կուղբիկին: Իսկ կուղբիկի ծնողներն այնքան ուրախացան, որ Շարիկի վրա չքարկացան: Նրանք հասկացան, որ Շարիկը իրենց տղային թյուրիմացարար է ջրից հանել ու տարել: Այնպես որ ամեն ինչ լավ վերջացավ: Միայն թե ստիպված նոր սեղան գնեցին:

Այդ օրվանից Շարիկն սկսեց թախածել, սիրտն ուզում էր անտառ գնալ, որտորդությամբ քրաղվել, ինչ կարող ես անել: Բայց հենց որ հրացանը ձեռքին դուրս էր գալիս ու մի զազանիկ էր տեսնում, չէր կարողանում կրակել, թեկուզ ճաքիր: Անտառից վերադառնում էր տիտոր, ոչ ուսում էր, ոչ խմում: Վիշտը կրծում էր սիրտը: Նիհարել էր, հյուծվել, այնպիսի օրն էր ընկել, որ ավելի վատը չեք էլ կարող պատկերացնել:

Գլուխ տասներկուերորդ — Հայրիկն ու մայրիկը կարդում են նամակը

Վերջապես Քերի Ֆեռոդորի նամակը հասավ քաղաք: Քաղաքում արդեն մեկ այլ փոստատար նամակն իր պայուսակը դրեց եւ տարավ հայրիկին ու մայրիկին հանձնելու: Դրում հորդ անձրեւ էր գալիս: Փոստատարը մինչեւ ոսկորները թրջվել էր: Հայրիկը նույնիսկ խղճաց նրան.

— Այս խոնավ եղանակին ինչո՞ւ եք նամակներ բաժանում: Ավելի լավ է փոստով ուղարկեք:

Փոստատարը համաձայնում է.

— Ճիշտ է, ճիշտ է: Ինչո՞ւ եմ խոնավ եղանակին նամակներ տանում: Լավ եք ասում: Հենց այսօր կգեկուցեմ պետիս:

Հայրիկն ու մայրիկը սկսեցին կարդալ նամակը: Սկզբում ամեն ինչ դուր եկավ նրանց: Եվ այն, որ Չեղի Ֆեռդորը տուն ու կով ունի, ե՛ւ այն, որ տունը տաք է, եւ ինքն էլ տրակտոր է գնել: Իսկ հետո նրանք վախեցան: Հայրիկը կարդում է.

— «Մենք մի տաք վառարան եկ ունենք: Ես շատ եմ սիրում նրա վրա հանգստանալ: Առողջությունս այնքան էլ լավ չէ. մեկ թաթերս են ջարդվում, մեկ պոչս է քարշ գալիս: Որովհետեւ, սիրելի հայրիկ, կյանքս ծանր է եղել, լի զրկանքներով ու վոնդումներով: Բայց իհմա ամեն ինչ այլ կերպ է դասավորվել: Համ երշիկ ունեմ, համ էլ միշտ թասով լիքք թարմ կաթ է դրված հատակին: Նույնիսկ մկներին տեսնել չեմ ուզում: Ես նրանց իհմա, հենց այնպես, հաճույքի համար եմ բռնում... կարթով... կամ փոշեծծիչով... Իսկ ցերեկները սիրում եմ տանիք մազցել... չուր եմ աչքերս, բեղերս ուղղում ու զժի պես արեւառվում: Արեւի տակ լպսում եմ ինձ...»

Մայրիկը լսեց, լսեց եւ մեկ էլ ուշաթափվեց: Հայրիկը ջուր տվեց, մայրիկին ուշքի բերեց: Շարունակությունը մայրիկն ինքը կարդաց.

— «Այս քանի օրը մազերս սկսեցին թափվել: Հին բուրդս այնպես է թափվում, որ տուն մտնել չի լինում: Բայց փոխարենը նորն է աճում՝ մաքո՞ւր, մետաքսյա: Ուղղակի ոնց որ կարակուլ: Մի քիչ էլ ձայնս է խոպոտել: Անցնող-դարձողը շատ է, դե բոլորի վրա էլ հաշում եմ: Մի ժամ, երկու ժամ հաշում եմ, հետո ոչ թե հաշոց, այլ մի տեսակ սուլոց ու խլթիվթոց է դուրս գալիս կոկորդիցու...»

Այդ պահին մի շրիկոց լսվեց սենյակում: Հիմա էլ հայրիկն էր ուշաթափվել: Այս անգամ մայրիկը վազեց ջրի՝ հայրիկին ուշքի բերելու համար:

Հայրիկն ուշքի է գալիս եւ ասում.

— Ի՞նչ է պատահել մեր երեխային: Թաթերը ջարդվում են, պոչը քարշ է տալիս, անցնող-դարձողի վրա էլ հաշում է:

— Եվ կարթով մուկ է բռնում,— ասում է մայրիկը:— Բուրդն էլ մաքուր կարակուլ է դարձել: Գուցե բնության զրկում ինքն էլ գատնո՞ւկ է դարձել: Մաքուր օդից:

— Հա՞,— ասում է հայրիկը:— Բայց ես չեմ լսել, որ գատները անցնող-դարձողի վրա հաշան: Գուցե խե՞լքն է թոցըրել մաքուր օդից:

Որոշեցին նամակը մինչեւ վերջ կարդալ: Կարդում են ու աշներին չեն հավատում:

— «Սիրելի հայրիկ ու մայրիկ, ես անճանաչելի եմ դարձել: Պոչս ոլորված, ականջներս ցից-ցից, քիթս սառը, բուրդս երկարած...»:

— Ի՞նչը,— հարցնում է մայրիկը:

— Բուրդը երկարել է: Հիմա ծմբանը ձյան վրա էլ կարող է քնել:

Մայրիկը խնդրում է.

— Լավ, մինչեւ վերջ կարդա: Ես ուզում եմ որդուս մասին ամբողջ ճշմարտությունն իմանալ:

Եվ հայրիկը մինչեւ վերջ կարդաց.

— «Ինքս եմ խանութ գնում: Վաճառողները բոլորը ճանաչում են ինձ: Ուսկորները ձրի են տալիս... Այնպես որ դուք ինձ համար մի՛ անհանգստացեք... Եթե հաջողվի

ցուցահանդես ընկնել, բոլոր մեղալներն ինձ համար ապահոված են: Ե՛վ գեղեցկության, Ե՛ւ խելացիության: Ցտեսություն: Ձեր որդի՛ Քեռի Ֆարիկ»:

Նամակը կարդալուց հետո հայրիկն ու մայրիկը կես ժամ շարունակ ոշքի չեին զալիս, արդեն խմել էին տաճը եղած բոլոր դեղերը:

Հետո մայրիկն ասում է.

— Գուցե դա մեր տղան չէ՞: Գուցե մե՞նք ենք խելքներս թոցրել: Գուցե, մեր բո՞լորն է երկարել: Եվ մե՞նք կարող ենք ձմռանը ձյան վրա քնել:

Հայրիկը նրան հանգստացնում է, իսկ մայրիկը, միեւնույն է, ճշում է.

— Այդ ինձ են ճանաչում բոլոր վաճառականները, եւ ոսկորները ձրի են տալիս: Ես եմ, որ մկներին տանել չեմ կարողանում: Այ, հիմա էլ թաթերս ջարդվում են, պոչս քարշ է զալիս: Որովհետեւ լյանքս ծանր է եղել՝ լի զրկանքներով ու վրնդումներով: Ո՞ւր է հատակին դրված իմ թասը:

Հայրիկը հազիվիազ կարողացավ նրան ուշքի բերել.

— Եթե մենք գժված լինեինք, ին երկուսս միասին չեինք գժվել: Մարդիկ առանձին-առանձին են գժվում: Այդ զրիապով է, որ բոլորը միասին են հիվանդանում: Իսկ մեր բուրող չի երկարել, ընդհակառակը պակասել է: Որովհետեւ երեկ վարավիրանց ենք գնացել:

Համենայն դեպս, նրանք չափեցին իրենց ջերմությունը: Ձերմությունն էլ էր կանոնավոր՝ 36,6: Հայրիկը վերցրեց նամակը եւ ուշադիր նայեց. ծրարը կնքված էր: Իսկ կնիքի վրա զրված էր այն զյուղի անունը, որտեղից նամակը ստացվել էր՝ Պրոստոկվաշինո:

Հայրիկն ու մայրիկը քարտեզը փոեցին ու սկսեցին փնտրել, թե որտեղ է գտնվում այդ զյուղը: Հաշվեցին եւ տեսան, որ այդպիսի քսաներկու զյուղ կա: Նրանք վերցրեցին ու նամակ գրեցին բոլոր զյուղերին: Բոլոր զյուղերի փոստատարներին:

«Հարգելի փոստատար:

Ձեր զյուղում չկա՞ արյոց քաղաքից եկած մի տղա, անունը Քեռի Ֆեռդոր: Նա հեռացել է տնից, եւ մենք շատ ենք անհանգստանում նրա համար:

Եթե նա ձեզ մոտ է ապրում, զրեք, մենք կգանք նրա ետեւից: Իսկ ձեզ համար նվերներ կրերենք: Միայն թե տղային բան չասեք, թող նա ոչինչ չիմանա: Թե չէ կարող է փոխադրվել մեկ ուրիշ զյուղ, ու այեւս նրան չենք գտնի: Իսկ մենք առանց նրա շատ ենք տիրում:

Մեծագույն հարգանքներով՝ մայրիկ Ռիմա եւ հայրիկ Դիմա»:

Քսաներկու այդպիսի նամակ գրեցին եւ ուղարկեցին Պրոստոկվաշինո անունը կրող բոլոր զյուղերը:

Գլուխ տասներերորդ — Շարիկը փոխում է մասնագիտությունը

Քեռի Ֆեռդորը կատվին ասում է.

— Շարիկի համար հարկավոր է մի բան մտածել: Թե չէ ձեռքից գնում է: Վշտից ոտքի վրա չորացել է:

Կատուն առաջարկում է.

— Գուցե նրան լծկան շուն դարձնենք: Պարտադիր չէ, որ որսորդական լինի: Սայլակ կզնենք եւ ամեն տեսակ իրեր կտեղափոխենք: Օրինակ՝ կաթը շուկա կտանենք:

— Չէ,— առարկում է Քերի Ֆեռդորը:— Լծկան շները միայն հյուսիսում են լինում: Բացի այդ, մենք տրակ-տրակ Միտյա ունենք: Ուրիշ բան պետք է մտածել:

Իսկ հետո ասում է.

— Գտա: Մենք նրան կրկեսի շուն կրարձնենք, պուդել: Կսովորեցնենք պարել, օղակի միջով ցատկել, փուչիկով ձեռնածություն անել: Թող երեխաներին ուրախացնի:

Կատուն համաձայնում է Քերի Ֆեռդորի հետ:

— Ինչ կա որ: Թող դառնա պուդել: Տնային շներ ել են հարկավոր, թեեւ օգուտ չեն տալիս: Կապրի սենյակում, կպառկի բազմոցին ու մաշիկները կմատուցի տիրոջը:

Նրանք կանչեցին Շարիկին ու հարցնում են.

— Հը, ի՞նչ կասես, կուզե՞ն քեզ պուդել դարձնենք:

— Թեկուր խրտվիլակ դարձնեք, ուզում եմ,— ասում է Շարիկը: — Միեւնույն է, կյանքը երես է դարձրել ինձնից: Բախտը ինձ չի ժպտում այս հողագնդի վրա: Ես իմ ձեռքով կթաղեմ կոչում:

Ու պատրաստվեցին գնալու գետի մյուս ափը, հինգհարկանի նոր շենքի վարսավիրանոցը: Քերի Ֆեռդորը գնաց տրակ-տրակ Միտյան գործի գցի, իսկ Մատրոսկինը գնաց Մուրկային խոտ տալու: Նա բացեց գոմի դուռն ու ասաց.

— Տունը թողնում ենք քո հույսին: Եթե որեւէ գող հայտնվի, հետք երկար-բարակ գլուխ շցավեցնես, պոզահարի, թող գնա: Իսկ երեկոյան ես քեզ համար մի համեղ բան կրերեմ:

Քերի Ֆեռդորը տրակ-տրակ Միտյային դուրս բերեց, ապուր լցրեց մեջն ու նստեց վարորդի աթոռին: Շարիկը տեղավորվեց նրա կողքին, իսկ Մատրոսկինը՝ տանիքին: Եվ այդպես գնացին մազերը խուզելու:

Միտյան ուրախ դոդում էր ու անիվներն աշխատեցնում: Որտեղ մի ջրափոս կար, ուղիղ միջով էր անցնում: Զուրը ցրիվ տալիս չորս կողմը: Դեռ շահել էր տրակառը, բոլորովին նո՞ր: Իսկ երբ հավեր էր տեսնում ճանապարհին, զաղտագողի մոտենում էր ու անսպասելի դոդում կոկորդով մեկ՝ «Ուու-ու-ուու-»: Խեղճ հավերը լեղապատառ փախչում էին:

Հիանալի ճանապարհորդություն էր: Քերի Ֆեռդորը երգում էր, տրակտորը ձայնակցում էր նրան: Շատ լավ էր ստացվում:

— Դաշում աճեց մի կեչի...

— Դը-դը-դը-դը:

— Կանաչ գանգուր մի կեչի...

— Դը-դը-դը-դը:

— Լյուլի-յուլի’...

— Դը՛ռ-դը՛ռ-դը՛ռ:

Վերջապես հասան վարսավիրանց: Կատուն մնաց տրակտորի վրա՝ հսկելու, իսկ Քեռի Ֆեռդրին ու Շարիկը գնացին մազերը կտրելու: Վարսավիրանցը մաքուր էր, լուսավոր ու հարմարավետ: Եվ կանայք, թասակների տակ նստած, չորանում էին: Վարսավիրը Քեռի Ֆեռդրին հարցնում է.

— Չեզ ի՞նչ է հարկավոր, երիտասարդ:

— Ուզում եմ Շարիկի մազերը խուզեք:

Վարսավիրն ասում է.

— Այս օրին էլ հասանք: Շարիկներ, խորանարդիկներ: Եվ ի՞նչ ձեւի ես ուզում: «Լեհական», թե՞ «կիսաբորս»: Կամ գուցե տղայի՝ սանրվածք: Գուցե ուղղակի սափրեր՝ նքամբողջապես:

Քեռի Ֆեռդրը պատասխանում է.

— Կարիք չկա սափրելու: Եվ ոչ էլ տղայի սանրվածք է պետք: Հարկավոր է մազերը կտրել պուդելի նման:

— Ինչպե՞ս թե պուդելի նման:

— Շատ հասարակ: Վերեւից պետք է գանգրացնել, ներքեւից լրիվ խուզել: Եվ պոչի ծայրին էլ մի փնջիկ թռղնել:

— Հասկանալի է, պատասխանում է վարսավիրը:— Պոչին փնջիկ, ձեռքին՝ ձեռնափայտիկ, բերանին է՝ ոսկորիկ: Դա արդեն ոչ թե Շարիկ կիհնի, այլ ուղղակի փեսացու:

Թասակների տակ նստած կանայք ծիծաղում են:

— Զեղավ, երիտասարդ: Մենք այստեղ ունենք կանանց դահլիճ, տղամարդկանց դահլիճ, բայց շների դահլիճ դեռևս չունենք:

Վյուպես ձեռնունայն նրանք վերադարձան Մատրոսկինի մոտ: Կատուն ասում է.

— Այ թե գործ արեցինք, հա՛: Պետք է ասեիք, որ սա ոչ թե սովորական շուն է, այլ մի որեւէ արտիստի կամ ստադիոնի դիրեկտորի շուն: Տեղնուտեղը ե՛ւ կիսուզեին մազերը, ե՛ւ կգանգրացնեին, եւ օծանելիքներով կցողեին: Հապա մի ես գնանք:

Երբ նրանք նորից եկան, վարսավիրը շատ զարմացավ:

— Չլինի՛ բան եք մոռացել, երիտասարդ:

Քեռի Ֆեռդրն ասում է.

— Մոռացանք ձեզ ասել, որ սա ուսյալ շուն է, ոչ թե սովորական: Մենք նրան եկույթի համար ենք պատրաստում:

Վարսավիրը քահ-քահ ծիծաղեց.

— Օ՛յ, ուսյալ, ընկած-եկած շուն է, ահա թե ինչ: Իսկ ի՞նչ կարող է անել: Գուցե գրել-կարդալ գիտի: Գուցե շվի փշել գիտի:

Քերի Ֆեռդորն ասում է:

— Ծվի փշելը չգիտեմ, բայց հեշտությամբ հաշվում է:

— Իսկապէ՞ս: Դե ասա, ինչի՞ է հավասար հինգ անգամ հինգը:

— Հինգ անգամ հինգ՝ կինի քսանինգ,— ասում է Շարիկը:— Իսկ վեց անգամ վեց՝ երեսունվեց:

Վարսավիրի լսելն ու բազկաթողին նստելը մեկ եղավ: Իսկպապես որ ուսալ շուն է. ոչ միայն հաշվել, այլև խոսել գիտի: Նա հանեց մարուր անձեռոցիկն ու ասաց.

— Եթե հաճախորդները դեմ չեն, խնդրեմ: Ե՞վ կվտրեմ մազերը, ե՞ւ կգանգրացնեմ: Երեխաներին էլ կպատմեմ, որպեսզի սովորեն: Եթե շներն էլ են գրագետ դարձել, ապա երեխաները պետք է շտապեն: Թե չէ դպրոցում բոլոր տեղերը կենդանիները կզբաղեցնեն:

Թասակների տակ նստած կանանցից եւ ո՛չ մեկը չառարկեց.

— Իհարկե: Իհարկե: Այդպիսի շանը անհրաժեշտ է անպայման կարգի թերել: Նրա ամեն ինչը պետք է գեղեցիկ լինի՝ ե՛ւ հոգին, ե՛ւ սանրվածքը, ե՛ւ պոչիկի փնջիկը:

Եվ վարսավիրը գործի անցավ: Մազերը կտրելիս զրուցում էր Շարիկի հետ: Նրան հարցեր էր տալիս գիտության տարբեր բնագավառներից: Իսկ Շարիկը պատասխանում էր:

Վարսավիրն ուղղակի ապշել էր: Նա այդպիսի ուսումնական շուն չէր տեսել իր կյանքում: Կտրեց Շարիկի մազերը, գանգրացրեց, գլուխը լվաց, զարմանքից իր աշխատանքի դիմաց փող էլ չվերցրեց: Եվ օծանելիքներով այնպես ցողեց Շարիկին, որ մի կիլոմետրի վրա հոտը փշում էր: Շարիկն այնպիսի պուդել դարձավ, որ կարելի էր միանգամից ցուցահանդես ներկայացնել: Նա նույնիսկ ինքը չճանաչեց իրեն հայելու մեջ:

— Այս ի՞նչ գանգրահեր արարած է: Ոչ թե շուն է, այլ իսկական օրիորդ: Չկծե՞մ դրան,— ասում է Շարիկը:

Արտաքնապես նմանվել էր պուդելի, ներքնապես նույն Շարիկն էր մնացել:

Իսկ Քերի Ֆեռդորը պատասխանում է.

— Այդ դու ես: Դարձել ես տնային շուն՝ պուդել: Ընտելացիր դրան:

Բայց թե Շարիկն այնքան էլ չուրախացավ: Ընդհակառակը, ավելի շատ տիսրեց: Նրա տիրությունը փոխանցվեց Քերի Ֆեռդորին, իսկ նրանից է՝ Մատրոսկինին: Նույնիսկ Միտյան ձայնը կտրեց, հավերին էլ չէր վախեցնում:

Վերջում միայն մի բան բարձրացրեց նրանց տրամադրությունը: Հասան իրենց տնակին եւ ինչ տեսնեն. փոստատար Պեչկինը նստած է խնձորենուն: Քերի Ֆեռդորն ասում է.

— Տեսեք, ի՞նչ միրգ է հասել մեր խնձորենու վրա, օգոգոսոսի վերջին: Ի՞նչ եք անում այդտեղ:

— Ոչինչ էլ չեմ անում,— պատասխանում է Պեչկինը:— Զեր կովից եմ պաշտպանվում: Եկել էի պատուհանից նայելու, թե արդյո՞ք բոլոր էլեկտրասալիկներն եք անջատել: Իսկ նա հարձակվեց վրաս: Տեսեք, թե բանի անցը կա շալվարիս վրա:

Եվ իսկապես, շարվարի վրա մի տասնյակ անգքեր կային: Իսկ Մուռկան պառկել էր ծառի տակ եւ որոճում էր:

Ստիպված՝ Պեչկինին հրավիրեցին թեյի: Իսկ մինչ նրանք թեյ կպատրաստեին, Պեչկինը զաղտագողի դուրս եկավ միջանցք եւ Քեռի Ֆեռդորի բաճկոնից մի կոճակ կտրեց: Թե ինչու այդպես վարվեց, մենք հետո կիմանանք: Իսկ առայժմ իմացեք, որ կոճակը շատ էր հարկավոր Պեչկինին:

Գլուխ տասնչորսերորդ — Պրոֆեսոր Սյոմինի վերադարձը

Քեռի Ֆեռդորը կարող էր երջանիկ ապրել, բայց զիտես ինչու չէր ստացվում: Հազիվ էին Շարիկի գործը գլուխ բերել, մի նոր դժբախտություն պատահեց: Մի օր Քեռի Ֆեռդորը զայիս է տուն եւ տեսնում. Մատրոսկինը կանգնել է հայելու առաջ ու բեղն է ներկում: Քեռի Ֆեռդորը հարցնում է.

— Ի՞նչ է պատահել, կատու: Չինի՞ թե սիրահարվել ես:

Կատուն քահ-քահ ծիծաղում է.

— Այդ էր մնացել, որ հիմարություններով զբաղվելի: Ես նույնիսկ այդ բառը չեմ լսել՝ սիրահարվել: Ուղղակի տերս է եկել, պրոֆեսոր Սյոմինը:

— Իսկ բեղդ ի՞նչ կապ ունի տիրոջդ հետ:

— Կապ ունի այնքանով,— ասում է կատուն, որ հիմա փոխում եմ արտաքինս: Անեզալ դրության եմ անցնում: Ընդհատակում պետք է ապրեմ:

— Ինչո՞ւ,— հայցնում է Քեռի Ֆեռդորը:

— Որպեսզի տերերս ինձ չտանեն:

— Այդ ո՞վ պետք է քեզ տանի: Ի՞նչ տերեր:

— Պրոֆեսորը կտանի: Չէ՞ որ ես նրա կատուն եմ: Շարիկին էլ կարող է տանել: Այս Շարիկն էլ է նրանը:

Քեռի Ֆեռդորը նույնիսկ տիրեց. իսկապես որ կարող են տանել:

— Լսիր, Մատրոսկին,— ասում է նա,— ինչպե՞ս կտանեն, եթե իրենք են քեզ տնից վռնդել:

— Բանն է հենց այդ է, որ չեն վռնդել,— ասում է կատուն:— Երբ նրանք մեկնում էին, ինձ իրենց ծանոթների մոտ թողեցին: Սրանք էլ՝ ուրիշ ծանոթների: Իսկ այդ ուրիշ ծանոթներից ինքս փախա: Նրանք ինձ փակել էին խորդանոցում, որպեսզի բուրդս շաղ շտամ սենյակներով մեկ: Երեւի Շարիկն էլ է այդ պատճառով անտուն մնացել:

Քեռի Ֆեռդորը մտածմունքի մեջ ընկավ, իսկ կատուն շարունակեց.

— Չէ, նա լավ պրոֆեսոր է: Շատ լավ, բայց ես հիմա ամենալավի մոտ է չեմ գնա: Ես, Քեռի Ֆեռդոր, ուզում եմ քեզ հետ ապրել եւ կով պահել:

Քեռի Ֆեռդորն ասում է.

— Ճիշտն ասած, զգիտեմ էլ, թե ինչ անեմ: Գուցե ուրիշ գյուղ տեղափոխվենք:

— Մեծ զիսացավանք է,— առարկում է կատուն:— Ե՞վ Մուռկային պետք է տեղափոխենք, ե՛ւ իրերը... Եվ հետո, այստեղ բոլորը մեզ ընտելացել են: Ոչինչ, Քեռի Ֆեռդոր, մի՛ հուսահատվիր: Ես ընդհատակում էլ կապրեմ: Դու քո գործին նայիր:

— Ի՞նչ գործ:

— Հիմա կասեմ: Զմեռը քթներիս տակ է, հարկավոր է փայտ պաշարել: Մի պարան վերցրու եւ գնա անտառ: Շարիկին էլ հետդ տար:

Բայց երբ Շարիկն իմացավ պրոֆեսորի գալու մասին, ինքն էլ չցանկացավ տնից դուրս գալ:

— Գնա՛, գնա՛,— ասում է կատուն:— Դու վախենալու բան չունես: Քեզ նույնիսկ հարազատ մայրու էլ չի ճանաչի: Չե՞ որ հիմա պուտել ես դարձել:

Եվ նրանք համաձայնեցին: Շարիկը վերցրեց պարանը, սղոցն ու կացինը, իսկ Քեռի Ֆեռդորը գնաց տրակ-տրակ Միտյային գործի ցցելու:

Կատուն նրանց ասում է.

— Հիշեցեք. հարկավոր է միայն կեչի կտրել. Կեչու փայտը ամենից լավն է.

Քեռի Ֆեռդորը համաձայն չէ:

— Ավսոս են կեչիները: Շատ են գեղեցիկ:

Կատուն ասում է.

— Դու, Քեռի Ֆեռդոր՝ ոչ թե գեղեցկության մասին մտածիր, այլ ցրտի: Երբ քառասուն աստիճան սառնամանիքը դուռդ կտրի, ի՞նչ ես անելու:

— Զգիտեմ,— պատասխանում է Քեռի Ֆեռդորը:— Բայց եթե բոլորն էլ սկսեն կեչի կտրել, անտառի փոխարեն միայն կոճղեր կմնան:

— Ճիշտ է,— ասում է Շարիկը:— Միայն պառավների համար է լավ, որ անտառի փոխարեն կոճղեր լինեն: Դրանց վրա կարող են նստել: Իսկ թռչուններն ու նապաստակներն ի՞նչ կանեն: Դու նրանց մասին մտածե՞լ ես:

— Նապաստակների մասին է պետք է մտածե՞մ,— զոռում է կատուն:— Իսկ իմ մասին ո՞վ պետք է մտածի: Վայենատին Բերեստկո՞վը:

— Իսկ ո՞վ է Վայենատին Բերեստկովը:

— Զգիտեմ ով է: Միայն զիտեմ, որ այդպես էր կոչվում այն նավի, որով նավարկել է իմ պապը:

— Երեսի նա լավ մարդ է եղել, որ քո պապը նրա անունը կրող նավով է նավարկել,— ասում է տղան:— Եվ նա հավանաբար կեչիներ չեր կտրատի:

— Բա ի՞նչ կաներ,— հարցնում է կատուն:

— Երեսի ցախ կիավաքեր,— ենթադրում է Շարիկը:

— Այ, մենք էլ այդպես կանենք,— ասում է Քեռի Ֆեռդորը:

Եվ Քերի Ֆեռոդորն ու Շարիկը զնացին ցախ հավաքելու: Տրակտորը լիքը ցախ բարձեցին եւ դեռ մի ամբողջ կույտ է ետեւից կապեցին: Իսկ հետո կարտոֆիլ խորովեցին խարույկի վրա, սունկ խորովեցին ու սկսեցին ուտել:

Իսկ տրակ-տրակ Միտյան նայեց-նայեց եւ հանկարծ ուժգին դոդոաց: Քերի Ֆեռոդորը թիչ մնաց խեղդվեր, իսկ Շարիկը երկու մետր ետ ցատկեց նույնիսկ:

— Բոլորովին մոռացել էի այդ դոդոանին,— ասում է:— Կարծեցի, թե ինքնաթափ մերենան է զալիս ինձ վրա:

— Իսկ ես կարծեցի, թե ոռոմք պայթեց,— ասում է Քերի Ֆեռոդոր:— Հարկավոր է նրան ուտելու բան տալ: Թե չէ մեզ էն աշխարհը կուղարկի: Շոգենավի նման սուլում է:

Նրանք կերակրեցին տրակտորին ու որոշեցին տուն վերադառնալ: Մեկ էլ այդ պահին մի նապաստակ վազեց նրանց մոտով: Շարիկը բղավեց.

— Տե՛ս, տե՛ս, որսը:

Քերի Ֆեռոդորը հանգստացրեց նրան.

— Ինչ է, մոռացե՞լ ես: Չե՞ որ դու հիմա պուդել ես: Ասա. «Թո՛ւհ, նապաստա՞կ: Հիմա ինձ նապաստակները բոլորովին չեն հետաքրքրում: Ինձ միայն հետաքրքրում է՝ մաշիկները տիրոջ մատուցել»:

Բայց Շարիկը իրենն է ասում.

— Թո՛ւհ, մաշիկնե՞ր: Մաշիկները հիմա ինձ չեն հետաքրքրում: Ինձ հետաքրքրում է՝ տիրոջ համար նապաստակ տանել: Այ, հիմա ես դրան ցույց կտամ:

Եվ այնպես սպացավ նապաստակի ետեւից, որ ծառերը հակառակ ուղղությամբ վազեցին: Իսկ Քերի Ֆեռոդորը տուն գնաց: Նա շատ ցախ էր բերել: Բայց Մատրոսկինը, միեւնույն է, դժգոհ էր:

Այդ ցախից ոչ թե տաքություն կստանանք, այլ միայն ճրթճրթոց կլսենք: Դա իհայտ չէ, այլ՝ աղք: Ես ուրիշ կերպ կվարվեմ:

Գլուխ տասնինգերորդ — Նամակ արեւի ինստիտուտին

Կատուն Քերի Ֆեռոդորից մատիս խնդրեց եւ սկսեց ինչ-որ բան զրել:

Քերի Ֆեռոդորը հարցնում է.

— Այդ ի՞նչ ես անում:

Կատուն պատասխանում է.

— Նամակ եմ զրում մի ինստիտուտի, որտեղ արեւ են ուսումնասիրում: Այդ ինստիտուտի հետ ես կապեր ունեմ:

— Իսկ ի՞նչ է նշանակում «կապեր»,— հարցնում է Քերի Ֆեռոդորը:

— Դա գործնական ծանոթություն է, — բացատրում է կատուն: — Երբ մարդիկ լավություն են անում միմյանց, առանց որևէ առիթի, որևէ շահի: Հանուն հին բարեկամության:

— Պարզ է, — ասում է Քերի Ֆեղորը: — Օրինակ, եթե տղան ավտոբուսում առանց որևէ պատճառի իր տեղը զիջում է ծեր կնոջը, ուրեմն դա անում է ծանոթության կարգով: Հանուն հին բարեկամության:

— Չէ, դա ուրիշ բան է, — ասում է կատուն: — Նա ուղղակի քաղաքավարի տղա է եղել: Կամ թե չէ ուսուցուիին ի է նույն ավտոբուսի մեջ եղել: Այ, եթե տղան մի ժամանակ պառավի համար կարտոֆիլ է մաքրել, նա ի տղայի համար այդ ընթացքում խնդիր է լուծել, նշանակում է, նրանց ծանոթությունը գործնական է եղել: Եվ նրանք միշտ մեկը մյուսին կօգնեն:

— Իսկ քեզ ի՞նչ օգնություն է պետք:

— Ես ուզում եմ, որ ինձ համար մի փոքրիկ արեւ ուղարկեն: Տնային:

— Լինո՞ւմ են այդպիսի արեւներ, — զարմանում է տղան:

— Այ, կտեսնես, — ասում է կատուն եւ հանկարծ գոռում է. — Ո՞վ թոցրեց մատիտս:

«Առ ու փախիր» ճայակը պահարանի վրայից պատասխանում է.

— Այդ ես եմ, փոստատար Պեչկինը: «Մուրզիկա» ամսագիրն եմ քերել:

— Տուր մատիտս, — հարմայում է Մատրոսկինը:

Բայց այնքան ի հեշտ չեր ճայակից ինչ-որ բան վերցնել: Կես ժամ շարունակ կատուն վազվում էր նրա ետեւից, մինչեւ որ վերջապես խլեց մատիտը: Ճայակը դրա համար նեղացավ: Եվ հենց որ Մատրոսկինը շրջվում էր, նա հարձակվում էր ետեւից եւ, հո՛պ, քաշում պոչից: Կատուն անսպասելիությունից ամեն անգամ վեր էր թռչում մինչեւ առաստաղ: Իսկ Քերի Ֆեղորն այնպես էր ծիծաղում, որ աչքերն արցունքակալել էին:

Վերջապես կատուն ավարտեց նամակը: Բովանդակությունը այսպիսին էր.

«Սիրելի գիտնականներ:

Ձեզ մոտ, հավանաբար, տաք է: Իսկ մեզ մոտ շուտով ձմեռ է լինելու: Բայց իմ տերը՝ Քերի Ֆեղորը, թույլ չի տալիս փայտ կտրատել: Զի հասկանում, որ կսաշենք, եթե ցախի հույսին մնանք: Խնդրում եմ մի տնային արեւ ուղարկեք: Թե չէ հետո ուշ կլինի:

Հարգանքներով՝ կատու Մատրոսկին»:

Հետո նա գրեց հասցեն. «Մոսկվա, Արեւի ֆիզիկայի ինստիտուտ, Արեւածագի եւ Մայրամուտի բաժին, պատուհանի մոտ կանգնած գիտնականին, որի խալաթի վրա կոճակներ չկան: Եվ կոշիկների թեկերն է տարբեր են»:

Այդ պահին, ատամների մեջ մի նապաստակ սեղմած, հայտնվեց Շարիկը: Եվ նապաստակն է լեզուն դուրս գցալ, ե՛ւ Շարիկը: Երկուսն էլ հոգնած են: Բայց Շարիկը երջանիկ է, իսկ նապաստակն այնքան էլ ուրախ չէ:

— Տեսնք, — ուրախ ասում է Շարիկը, — որսացի:

— Իսկ ինչո՞ւ, — հարցնում է կատուն:

— Ինչպե՞ս թե ինչու:

— Հենց այդպես: Ի՞նչ պետք է անես:

— Զգիտեմ,— պատասխանում է շունը:— Իմ զործը որսալն է: Իսկ թե ինչ պետք է անել, դա արդեն թող տերս որոշի: Գուցե մանկապարտեզ կհանձնի նրան: Կամ էլ բուրդը կպոկի եւ թաթմաններ կգործի:

— Տերդ որոշում է, որ նրան պետք է ազատ արձակես,— ասում է Քեռի Ֆեռդորը:— Գազանները պետք է անտառում ապրեն: Տունը գազանանոց չպահի դարձնենք:

Շարիկը տիսրեց, ասես ներսում լամպը մարեց, բայց չվիճեց:

Իսկ Քեռի Ֆեռդորը նապաստակին մի գազար տվեց եւ տարավ արտասանդուղը:

— Դե, — ասում է, — փախի՛ր:

Իսկ նապաստակը ոչ մի տեղ չի փախչում: Հանգիստ նստել ու նայում է:

Այստեղ Մատրոսկինն անհանգստանում է. լավ է, մի բնակիչ է ավելացավ: Իսկի եղածին չգիտենք ինչպես պահենք:

Նա վերցնում է Շարիկի հրացանը, թաքուն մոտենում նապաստակին եւ այնպես է կրակում ականջի տակ, որ նապաստակը վեր է թռչում: Ոտքերն օդում թափահարում է ու գնդակի պես պահում: Մատրոսկինն էլ պակաս չի փախենում, ինքն էլ գնդակի պես հակառակ կողմի վրա է սուրում: Միայն հրացանն է մնում ընկած, ու կապույտ ծուխն է վեր բարձրանում:

Իսկ Շարիկը, արտասանդուղին կանգնած, զլոր-զլոր արցունքներ է թափում աչքերից: Քեռի Ֆեռդորն ասում է.

— Դե լավ, լաց մի՛ լինի: Ես մի բան եմ մտածել քեզ համար: Ֆոտոպապարատ կզնենք, ֆոտորուրդությամբ կրադիս: Գազաններին կնկարես ու լուսանկարները տարբեր ամսագրերի կուտարկես:

Հավանաբար, դա իսկապես լավագույն միջոցն էր: Մի կողմից՝ դա, այնուամենայնիվ, որսորդություն էր: Մյուս կողմից՝ հարկ չէր լինի գազաններին սպանել:

Ու Շարիկն սպասեց լուսանկարչական ապարատին այնպես, ինչպես երեխաներն սպասում են Մայիսի մեկի տոննակատարությանը:

Գլուխ տասնվեցերորդ — Հորդուկը

Այն օրվանից, երբ Մատրոսկինը ընդհատակ անցավ, Քեռի Ֆեռդորի համար կյանքը դժվարացավ: Մուրկային դաշտ էր քշում Քեռի Ֆեռդորը: Խանութ էր գնում Քեռի Ֆեռդորը: Ջրհորից ջուր էր բերում դարձյալ Քեռի Ֆեռդորը: Իսկ առաջ այդ ամենով զրադիւմ էր կատուն: Շարիկից էլ առանձնապես օգուտ չկար: Որովհետեւ նրա համար ֆոտոպապարատ էին գնել: Առավտոից անտառ էր գնում եւ մինչեւ կեսօր վազվզում նապաստակների ետեւից, որ նրանց նկարի: Մյուս կեսն էլ վազվզում էր, որ նկարները բաժանի:

Ինչ-ինչ, բայց ձանձրանալու ժամանակ չուներ Քեռի Ֆեռդորը: Եվ ահա մի նոր պատմություն տեղի ունեցավ: Առավտոյան, երբ դեռ քնած էին, մեկը դուռը թակեց:

Մատրոսկինը լեղաճաք եղավ. չինի՝ պրոֆեսորն է եկել իր ետևից: Եվ վառարանից ցատկեց ու մտավ հատակի տակ: (Հիմա նա հատակի անցքը միշտ բաց էր պահում: Իսկ նկուղում մի փոքրիկ պատուհան կար, որով նա կարող էր փախչել բանջարանց, այնտեղից է՝ անտառ): Անկողնում պառկած Քերի Ֆեռդորը հարցնում է.

— Ո՞վ է:

Թակողը Շարիկն էր.

— Աչքներդ լույս, մեր կովը հորթուկ է ծնել:

Քերի Ֆեռդորն ու կատուն վագեցին գոմ: Եվ իսկապես. կովի կողքին մի հորթուկ էր կանգնած: Իսկ երեկ չկար:

Մատրոսկինն անմիջապես սկսեց երեւակայել. իբր թե տեսեք, իր կովն էլ է օգուտ տալիս: Ոչ թե միայն ափողոց ուտել գիտի: Իսկ հորթուկը նայում էր նրանց ու շրջունքները չփշփացնում:

— Հարկավոր է սրան տուն տանել,— ասում է կատուն:— Այստեղ կմրսի:

— Մո՞րն էլ պետք է տուն տանենք,— հարցնում է Շարիկը:

— Չէ մի՛, եղ էր պակաս,— ասում է Քերի Ֆեռդորը:— Տանը սավան ու սփոց չի թողնի, բոլորը կուտի: Թող այդտեղ մնա:

Հորթուկին տարան տուն եւ սկսեցին ուշադիր զննել: Հորթուկն ամբողջապես ծածկված էր մազերով ու թաց էր: Իսկ ընդհանրապես, նա ցիկ էր: Սկսեցին միտք անել, թե անունը ինչ դնեն: Շարիկն ասում է.

— Մտածելու ի՞նչ կա, եկեք անունը Բոբիկ դնենք:

Կատուն ծիծառից թուլացավ.

— Քիչ մնա, Ուերս էլ կդնես: Կամ թե չէ՛ Տուգիկ: Կուգիկ, Տուգիկ, կեր մի թուգիկ: Այս նա ցուլ է, ոչ թե ինչ-որ սպանիել: Նրան լուրջ անուն է պետք: Օրինակ՝ Արիստոֆան: Ե՛վ գեղեցիկ անուն է, ե՛ւ պարտավորեցնող:

— Իսկ ո՞վ է Արիստոֆանը,— հարցնում է Շարիկը:

— Զգիտեմ,— ասում է կատուն:— Միայն թե այն շոգենավը, որով նավարկում էր տասու, այդ անունն էր կրում:

— Շոգենավն ո՞ւր, հորթուկն ուր,— ասում է Քերի Ֆեռդորը:— Համ էլ ո՞ւմ դուր կզա, որ հորթուկին իր անունով կոչեն: Եկեք այսպես անենք: Թող մեզնից յուրաքանչյուրը մի անուն մտածի եւ թղթի վրա գրի: Որ թուղթը որ հանենք զիսարկի միջից, դա էլ թող լինի հորթուկի անունը:

Առաջարկը բոլորին դուր եկավ: Եվ սկսեցին մտածել: Կատուն գրեց՝ Սրբնթաց: Ե՛վ ծովային է, ե՛ւ գեղեցիկ: Քերի Ֆեռդորը գրեց՝ Գավլյուշա: Դա շատ էր սազում հորթուկին: Իսկ երբ մեծանա, ցուլ դառնա, նրանից ոչ ոք չի վախենա: Որովհետեւ Գավլյուշա անունով ցուլը չար չի լինի, միայն բարի կարող է լինել:

Իսկ Շարիկը մտածեց, մտածեց ու ոչ մի բան չկարողացավ գտնել: Եվ որոշեց.

— Ես էլ կգրեմ այն, ինչ կանցնի մտքով:

Եվ նրա մտքով անցավ «թեյնիկ» բառը: Նա այդպես էլ գրեց ու շատ գոհ մնաց: Նրան դուր եկավ այդ անունը՝ Թեյնիկ: Ինչոր ազնիվ բան կար դրա մեջ, իսպանակա՞ն: Ու երբ սկսեցին զիսարկից անունները հանել, հենց «Թեյնիկն» էլ դուրս քաշեցին: Կատուն նոյնիսկ հոգոց հանեց, այ թե անուն է, հա՛: Միեւնոյն է, թե նրա անունը Կաթսա կամ Թափա դնեիր: Քիչ մնա փլավքամիշ կասես:

— Դո՞ւ ինչ անուն ես մտածել, Զետի Ֆեռդոր,— հարցնում է Շարիկը:

— Գավրյուշա:

— Իսկ ես՝ Սրբնթաց:

— Ինձ Գավրյուշան է դուր զալիս,— հանկարծ ասում է Շարիկը:— Թող նրա անունը Գավրյուշա լինի: Ես շտապելուց Թեյնիկ գրեցի:

Կատուն համաձայնում է:

— Թող Գավրյուշա լինի: Շատ լավ անուն է: Հազվադեպ:

Ու այդպես հորթուկը դարձավ Գավրյուշա: Այդ ժամանակ մի հետաքրքիր խոսակցություն սկսվեց: Այն մասին, թե հորթուկն ումն է: Չէ՞ որ կովը վարձով էին բերել: Զետի Ֆեռդորն ասում է:

— Կովը պետական է: Նշանակում է հորթուկն էլ է պետական:

Իսկ կատուն համաձայն չէ:

— Կովը իսկապես պետական է: Բայց այն ամենը, ինչոր նա տալիս Է՝ կաթ կամ հորթուկ, մերն է: Դե, Զետի Ֆեռդոր, ինքդ ասա: Այ եթե սառնարան վարձած լինեինք, ո՞ւմը կլիներ:

— Պետական:

— Ճիշտ է, իսկ սառույցը, որ նա արտադրում է, ո՞ւմն է:

— Սառույցը մերն է: Մենք նրան հենց սառույցի համար ենք վերցնում:

— Այստեղ էլ այդպես պետք է լինի: Բոլորը, ինչ կովը տալիս է, մեզ է պատկանում: Դրա համար էլ, վերցրել ենք նրան:

— Բայց մենք մի կով ենք վերցրել: Իսկ հիմա երկուսն է դարձել: Եթե կովը մերը չի, նշանակում է հորթուկն էլ մերը չի:

Մատրոսկինը նոյնիսկ բարկացավ:

— Վերցրել ենք: Բայց վերցրել ենք անդորրազրով:— Ու անդորրազիրը բերեց:— Ահա՛, տեսեք, թե ինչ է զրված. «Կով: Շիկամազ: Մեկ հատ»: Հորթուկի մասին ոչինչ զրված չէ: Եվ քանի որ կովը վերցրել ենք անդորրազրով, անդորրազրով էլ կվերադարձնենք՝ մեկ հատ:

Այստեղ Շարիկը մեջ ընկավ.

— Զեմ հասկանում, թե ինչու եք վիճում: Չէ՞ որ դու ուզում էիր կովը գնել, Մատրոսկին: Եթե քեզ դուր զար: Դե զնիր: Հորթուկն էլ կմնա մեզ:

— Ես իմ Մուռկայից ոչ մի դեպքում չեմ բաժանվի, — ասում է կատուն: — Անպայման կզնեմ: Դա հենց այնպես սկզբունքի համար էի վիճում: Որովհետեւ Քեռի Ֆեռդորը իրավացի չէր:

Մինչ նրանք վիճում էին, հորթուկը ժամանակն անտեղի չկորցրեց: Կերավ Քեռի Ֆեռդորի երկու թաշկինակը: Նա սեւուկ էր, իսկ մայրիկը՝ շիկամազ: Բայց բնավորությամբ մորն էր քաշել. ինչ պատահեր՝ ուտում էր:

Գլուխ տասնյոթերորդ — Զրույց պրոֆեսոր Սյումինի հետ

Գավրյուշա հորթուկի հայտնվելուց հետո տնտեսության մեջ գործերն ավելի շատացան:

Եվ այդ ժամանակ Քեռի Ֆեռդորը հասկացավ, որ ինքը առանց Մատրոսկինի օգնության կորած է: Լավն այն է, գլուխն առնի ու զնա ծնողների մոտ: Ու որոշեց խոսել պրոֆեսոր Սյումինի հետ:

Նա հազար ամենալավ բլուզը, ամենալավ շալվարը, սանրվեց ինչպես հարկն է ու զնաց:

Ահա նա հասավ պրոֆեսորի ամառանոցին ու զանգ տվեց: Անմիջապես դուռը բացեց փոշեծծիչը ձեռքին մի տատիկ.

— Ի՞նչ ես ուզում, տղա:

— Ուզում եմ պրոֆեսորի հետ խոսել:

— Լավ, ներս արի, — ասաց տատիկը: — Միայն թե ոտքերդ մաքրիր:

Քեռի Ֆեռդորը ներս մտավ եւ ապշեց այն բանից, թե որքան մաքուր էր շուրջը: Ամեն ինչ փայլում էր, ինչպես քաղաքի բնակարանում: Չորս կողմը գրքերով լի պահարաններ էին, բազկաթռներ ու աթոռներ: Խոհանոցն էլ ամբողջապես սպիտակ էր:

Տատիկը Քեռի Ֆեռդորի ձեռքից բռնեց ու տարավ պրոֆեսորի սենյակը:

— Ահա, — ասաց նա, — քեզ մոտ է եկել այս երիտասարդը, Վանյա:

Պրոֆեսորը գլուխը բարձրացրեց սեղանից ու ասաց.

— Բարեւ, տղա, ինչո՞ւ ես եկել:

— Ուզում եմ կատվի մասին հարցնել:

— Ի՞նչ պիտի հարցնես կատվի մասին:

— Ենթադրենք դուք մի կատու եք ունեցել, — ասում է Քեռի Ֆեռդորը: — Իսկ հիմա նա ապրում է ուրիշ տեղ եւ չի ուզում զալ ձեզ մոտ: Դուք կարո՞ղ եք նրան վերցնել, թե ոչ:

— Ոչ, — պատասխանում է պրոֆեսորը: — Եթե նա չի ուզում զալ ինձ մոտ, ինչպե՞ս վերցնեմ: Դա ճիշտ չի լինի: Իսկ ո՞ր կատվի մասին եք ասում:

— Մատրոսկինի: Նա առաջ ձեզ մոտ է ապրել: Իսկ հիմա ինձ մոտ է:

— Իսկ դուք ի՞նչ գիտեք, որ նա չի ուզում ինձ մոտ զալ:

— Ինքն է ինձ ասել:

Պրոֆեսորը վեր թռավ տեղից:

— Ո՞վ է ասել:

— Կատու Մատրոսկինը:

— Լսեցեք, երիտասարդ,— զարմացավ պրոֆեսորը,— այդ որտե՞ղ եք տեսել, որ կատուն խոսի:

— Իմ տանը:

— Զի՞ կարող պատահել,— ասում է պրոֆեսոր Սյոմինը:— Իմ ամբողջ կյանքում կենդանիների լեզուներ եմ ուսումնասիրել եւ ինքս էլ գրեթե կատվերեն մի քիչ գիտեմ, բայց խոսող կատու երբեք չեմ տեսել: Չե՞ք կարող ինձ նրա հետ ծանոթացնել:

— Իսկ դուք նրան չե՞ք վերցնի: Չե՞ որ ձեր կատուն է:

— Ոչ, ոչ: Չեմ վերցնի: Գիտե՞ք ինչ, դուք ինձ հյուր եկեք այդ կատվի հետ միասին: Ճաշելու: Այսօր ես շատ համեղ ապուր ունեմ:

Քենի Ֆեոդորը գնաց կատվին կանչելու: Նա ուզում էր Շարիկին էլ հրավիրել, բայց Շարիկը կտրականապես հրաժարվեց.

— Ես սեղանի մոտ նստել է զգիտեմ եւ ընդհանրապես վախենում եմ ու ամաչում:

— Ինչի՞ց ես վախենում:

— Վախենում եմ, որ ինձ վերցնեն:

— Խենթո՞ւկ: Այս նա ասաց, որ եթե կենդանին չի ուզում, ուրեմն չի կարելի վերցնել:

— Նա կատուների մասին է ասել: Իսկ շների մասին դեռ հայտնի չի: Ավելի լավ է մնամ տանը եւ լուսանկարները երեւակեմ:

Ու գնացին երկուսով՝ Քենի Ֆեոդորն ու Մատրոսկինը:

Երբ տեղ հասան, նրանց համար արդեն սեղան էր բացված: Հրաշալի սեղան էր: Ե՛վ պատառաքաղներ կային, ե՛ւ զդալներ, ե՛ւ հաց, ե՛ւ ապուրն էլ իսկապես շատ համեղ էր՝ կաթնասերով բորշչ էր: Պրոֆեսորն անընդհատ խոսում էր կատվի հետ: Նա հարցրեց.

— Այ, ես ուզում եմ ճշտել: Կատուների լեզվով ինչպե՞ս կասեն. «Չմոտենաք ինձ, ես ձեզ կճանկրեմ»:

Մատրոսկինը պատասխանեց.

— Դա ոչ թե լեզվով կինի, այլ՝ ճանկերով: Հարկավոր է մեջքը ուոցնել, աջ թաթը բարձրացնել ու ճանկերն արձակել.

— Իսկ եթե «22222222» ավելացնե՞նք, — հարցրեց պրոֆեսորը:

— Այդ դեպքում, — պատասխանեց կատուն, — դա կատվերեն հայհոյանք դուրս կգա: Մոտավորապես այսպես. «Չմոտենաք ինձ, ես ձեզ կճանկրեմ: Ավելի լավ է, կորեք շան տատիկի ծոցը»:

Եվ պրոֆեսորը նրա բոլոր ասածները զրի էր առնում: Իսկ հետո շատ կոնֆետ նվիրեց եւ կատվի համար մի բանկա կաթնասեր:

— Այու, — ասում է պրոֆեսորը, — ես ոչ թե կատու, այլ ոսկի եմ ունեցել: Չեմ իմացել: Թե չեմ վաղուց ակադեմիկոս դարձած կլինեի:

Նա Քերի Ֆեռդորին նվիրեց նաեւ գազանների լեզվի մասին գրած իր գիրքը ու նրան միշտ իր մոտ էր հրավիրում: Ինքն էլ խոստացավ այցելել: Ընդհանրապես նա շատ լավ մարդ դուրս եկավ: Եվ այդ օրվանից կատու Մատրոսկինը դուրս եկավ ընդհանակից ու այլեւս ամեն դատարկ բանի պատճառով վառարանից իրեն հատակի տակ չեր նետում:

Գլուխ տասնութերորդ — Փոստատար Պետիկինի նամակը

Հայրիկն ու մայրիկը շատ էին կարուել Քերի Ֆեռդորին: Նրանց համար կյանքն անհմաստ էր դարձել: Առաջ ժամանակ էլ չին ունենում նրանով գրադպելու. տնտեսության հոգսերը, հեռուստացույցը, երեկոյան թերթերը խորհ էին ամբողջ ժամանակը: Իսկ հիմա այնքան ազատ ժամանակ էին ունենում, որ երկու Քերի Ֆեռդորի էլ կրավականացներ: Զգիտեին, թե որտեղ վատնեն այդ ժամանակը: Շարունակ Քերի Ֆեռդորից էին խոսում եւ փոստարկողը ստուգում՝ Պրոստոկվաշինո գյուղից արդյոք նամակ չկա՞:

Մայրիկն ասում է.

— Հիմա ես շատ բան հասկացա: Եթե Քերի Ֆեռդորին գտնենք, նրա համար մի դայակ եմ վարձելու: Որպեսզի ոչ մի քայլ երեխայից չհեռանա: Այդ դեպքում Քերի Ֆեռդորը ոչ մի տեղ էլ չի փախչի:

— Բոլորովին էլ ճիշտ չես անի, — ասում է հայրիկը: — Չե՞ որ նա տղա է: Նրան ընկերներ են պետք, ձեղնահարկ, տարբեր տեսակի հոլիկներ: Իսկ դու ուզում ես նրան փափկացուն օրիորդ դարձնել:

— Ոչ թե փափկացուն, այլ փափկասո՞ւն:

— Թոռ թեկուզ փափկանուշ լինի, — բղավում է հայրիկը: — Չե՞ որ նա տղա է: Հիմա նույնիսկ աղջիկներն են աշխայժ ու չարաճի: Մանկապարտեզի մոտով անցա այն պահին, երբ երեխաներին քննեցնում էին: Այնպես էին ցատկուում մահճակալների վրա, քիչ էր մնում առաստաղին հասնեին: Ոնց որ ծղրիդներ: Ծով էին լինում շալվարների միջից: Նույնիսկ ես ցատկութելու ցանկություն զգացի:

— Դե ցատկիր, ցատկիր, — ասում է մայրիկը: — Ցատկիր մինչեւ առաստաղ: Ծով եկ շալվարիդ միջից: Միայն թե ես թույլ չեմ տա, որ իմ տղային փշացնես: Եվ ոչ շուն կմտնի մեր տուն, ոչ էլ կատու: Ծայրահեղ դեպքում միայն կրիա կհանդուրժեմ, այն էլ տուփի մեջ:

Եվ ամեն օր նրանք խոսում էին այսպես: Մայրիկն ավելի ու ավելի էր խատանում: Որոշել էր ոչ հայրիկին, ոչ էլ Քերի Ֆեռդորին ազատություն չտալ: Բայց ահա փոստատարներից սկսեցին նամակներ ստացվել: Նախ՝ մեկը: Հետո՝ մի հատ էլ: Հետո՝ միանգամից տասը հատ: Բայց լավ նորություններ չկային: Նամակների բովանդակությունն այսպիսին էր.

«Բարեւ ձեզ, հայրիկ ու մայրիկ:

Գրում է Պրոստոկվաշինո գյուղի փոստատարը: Իմ անունն է Վիկին Վասիլի Պետրովիչ: Ես լավ եմ աշխատում:

Դուք հարցնում եք, թե մեր գյուղում Քեռի Ֆեռդոր անունով տղա չկա՞ արդյոք: Պատասխանում ենք. այդպիսի տղա մեզ մոտ չկա:

Կա մի մարդ, անունը՝ Ֆեռդոր Ֆեռդորովիչ: Բայց նա պապիկ է, ոչ թե տղա: Եվ, հավանաբար, նա ծեզ պետք չէ:

Մեր կողմերում լավ է եւ ազատ տարածություն էլ շատ կա: Եկեք մեզ մոտ ապրելու եւ աշխատելու:

Ողջույն ձեզ բոլոր պրոստոկվաշինցիներից:

Մեծագույն ողջույններով՝ փոստատար Վիլկին»:

Կամ էլ այսպիսին.

«Հարգելի հայրիկ ու մայրիկ:

Գրում եք, որ տնից հեռացել է ձեր քեռին: Ի՞նչ անենք Բայց ի՞նչ գործ ունի էստեղ տղան: Գուցե նա հեռացել է, երբ տղա՞ է եղել, իսկ հիմա մեծացել ու քեռի՞ է դարձել: Այդ դեպքում չեմ հասկանում, թե նվերներն ում համար են:

Գրեք ինձ ու պառավիս, որ իմանանք: Միայն թե շուտ, թե չէ մենք հանգստյան տուն ենք գնալու: Շատ ենք ուզում իմանալ այդ հանելուկային գաղտնիքի պատասխանը:

Փոստատար Լոժկին եւ իր պառավ կին»:

Շատ կային տարբեր տիպի նամակներ, բայց այն, ինչ որ պետք էր, չկար:

Մայրիկն ասում է.

— Վերջը Քեռի Ֆեռդորին չենք գտնելու: Արդեն քսանմեկ նամակ է եկել, իսկ նրա մասին ոչ մի խոսք չկա:

Հայրիկը նրան հանգստացնում է.

— Ոչինչ, ոչինչ: Կսպասենք քսաներկուերորդին:

Եվ ահա եկավ քսաներկուերորդը: Մայրիկը բացում է նամակն ու աչքերին չի հավատում:

«Բարեւ ձեզ, հայրիկ ու մայրիկ:

Գրում է փոստատար Պեչկինը Պրոստոկվաշին գյուղից: Դուք հարցնում եք Քեռի Ֆեռդոր անունով տղայի մասին: Նրա մասին դուք հայտարարություն է էիք տպել թերթում: Այդ տղան ապրում է մեզ մոտ: Վերջերս գնացի նար տուն՝ ստուգելու, թե բոլո՞ր սալօշախներն են արդյոք անջատված, իսկ նրա կովը այնպէս հարու տվեց ինձ, որ ստիպված ծառը բարձրացա:

Հետո էլ նրա տանը թեյ խմեցի եւ աննկատելիորեն մի կոճակ կտրեցի նրա բաճկոնից: Տեսեք, արդյո՞ք ձեր կոճակն է: Եթե կոճակը ձերն է, ուրեմն տղան էլ է ձերը»:

Մայրիկը ծրարից հանում է կոճակը եւ ճշում.

— Սա իմ կոճակն է: Ես ինքս եմ կարել Քեռի Ֆեռդորի բաճկոնին:

Հայրիկն էլ մի կողմից է բղավում.

— Ուռա՛:

Եվ ուրախությունից մայրիկին զրկում ու վեր-վեր է նետում: Այդ պահին ակնոցն ընկնում է աչքերից, ու նա չի տեսնում մայրիկին, որպեսզի բռնի: Լավ է, որ մայրիկը բազմոցի վրա է ընկնում, թե չէ հայրիկը նրա ձեռքից չեր պրծնի:

Եվ մայրիկը շարունակում է կարդալ.

— «Ձեր տղայի գործերը շատ լավ են: Ե՞վ տրակտոր ունի, ե՛ւ կով: Զանազան կենդանիներ է պահում: Մի շատ խորամանկ կատու էլ ունի: Այդ կատվի պատճառով ես մեկուսարան ընկա: ինձ այնպիսի կաթ էր հյուրասիրել, որից գժվում են:

Կարող եք գալ ձեր տղայի հետեւից, քանի որ նա ոչինչ չգիտի: Ես էլ նրան ոչինչ չեմ ասի: Բայց հետներդ մի հեծանիվ բերեք, որ ես նստեմ ու նամակներ բաժանեմ: Նոր շալվարից էլ չէի հրաժարվի:

Ցտեսություն: Մոժայսկի շրջանի Պրոստոկվաշինո գյուղի փոստատար՝ Պեչկին»:

Նամակն ստանալուց հետո հայրիկն ու մայրիկը պատրաստվում են ճամփա ընկնել, իսկ Քեռի Ֆեռդորը ոչինչ չգիտեր:

Գլուխ տասնիններորդ — Ծանրոցը

Առավոտները գետինն արդեն սառած էր լինում, ձմեռը մոտենում էր: Ամեն մեկն իր գործով էր զբաղվում: Շարիկը լուսանկարչական ապարատը ձեռքին վազվզում էր անտառում: Քեռի Ֆեռդորը կերաման էր պատրաստում թօջունների եւ անտառային զազանների համար: Իսկ Մատրոսկինը Գավլյուշային դաս էր տալիս: Ամեն ինչ սովորեցնում էր նրան: Փայտը ջուրն էր զցում, հորթուկը գնում էր բերում: Ասում էր՝ «Պառկիր», պառկում էր: Մատրոսկինը հրամայում էր. «Բռնիր, քը ս-քը ս», հորթուկն անմիջապես վազում էր ու սկսում պոզահարել:

Նա լավ պահակ ցուլ էր դառնում: Եվ ահա մի օր, երբ ամեն մեկն իր գործով էր զբաղված, եկավ փոստատար Պեչկինը:

— Այստե՞ղ է ապրում կատու Մատրոսկինը:

— Ես եմ Մատրոսկինը, — ասում է կատուն:

— Ձեր անունով ծանրոց է ստացվել: Ահա, տեսեք: Միայն թե ձեզ չեմ տա, որովհետեւ դուք փաստաթուղթ չունեք:

Քեռի Ֆեռդորը հարցնում է.

— Բա ել ինչո՞ւ ես բերել:

— Որովհետեւ կարգն այդպես է: Ծանրոց է եկել, ուրեմն պարտավոր եմ բերել: Իսկ քանի որ փաստաթուղթ չունեք, պետք է չտամ:

Կատուն գոռում է.

— Տվեք ծանրոցը:

— Ի՞նչ փաստաթուղթ ունեք, — ասում է փոստատարը:

— Թաթեր, պոչ եւ բեղեք: Ահա իմ փաստաթուղթը:

Բայց վեճի մեջ Պեչկինին չես հաղթի:

— Փաստաթղթերի վրա միշտ կնիք է լինում եւ համար: Իսկ ձեր պոչի վրա համար կա՞: Բեղերն է հեշտությամբ կարելի է կեղծել: Այնպես որ ստիպված եմ ծանրոցը ետ ուղարկել:

— Բա հետո ի՞նչ կլինի,— հարցնում է Քեռի Ֆեռդորը:

— Զգիտեմ: Միայն թե հիմա ամեն օր ես ձեր տուն կգամ: Կրերեմ ծանրոցը, կհարցնեմ փաստաթղթերի մասին եւ ետ կտանեմ: Այդպես երկու շաբաթ շարունակ: Իսկ քանի որ ծանրոցը ոչ ոք չի ստանա, ետ կզնա քաղաք:

— Եվ դա ճիշտ կլինի,— հարցնում է տղան:

— Կարգն այդպես է,— պատասխանում է Պեչկինը:— Գուցե ես ձեզ շատ եմ սիրում, գուցե լաց էլ կլինեմ: Բայց կարգը խախտել չեմ կարող:

— Նա լաց չի լինի,— ասում է Շարիկը:

— Դա արդեն իմ գործն է,— ասում է Պեչկինը:— Կուզեմ լաց կլինեմ, կուզեմ չեմ: Ես ազատ մարդ եմ:— Ասաց ու գնաց:

Մատրոսկինը կատաղությունից ուզում էր Գավրյուշային բաց թողնել նրա վրա, բայց Քեռի Ֆեռդորը թույլ չտվեց: Նա ասաց.

— Ահա թե ինչ եմ մտածել: Կզտնենք Պեչկինի արկողի նման մի արկող ու վրան ամեն ինչ կգրենք: Ե՛վ մեր հասցեն, ե՛ւ ետհասցեն: Կկնքենք ու պարանով կկապենք: Երբ Պեչկինը զա, թեյ կիյուրասիրենք, իսկ արկողները կվերցնենք ու կփոխենք: Ծանրոցը մեզ մոտ կմնա, իսկ դատարկ արկողը կուղարկեն գիտնականներին:

— Իսկ ինչո՞ւ դատարկ,— ասում է Մատրոսկինը:— Արկողում սունկ կդնենք կամ ընկույզ: Թող գիտնականները նվեր ստանան:

— Ուռա՛,— գոռում է Շարիկը: Եվ ուրախությունից իր մոտ է կանչում Գավրյուշային.— Գավրյուշա, եկ ինձ մոտ: Տո՛ւր թաթղ:

Գավրյուշան ոտքը մեկնում է եւ սկսում պոչն այս ու այն կողմ շարժել, ճիշտ շան նման:

Այդպես է արեցին: Վերցրին մի արկող եւ մեջը սունկ ու ընկույզ լցրին: Նամակ է գրեցին.

«Սիրելի գիտնականներ.

Ծնորհակալություն ծանրոցի համար: Ցանկանում ենք ձեզ առողջություն, նոր գյուտեր: Եվ հատկապես ամեն տեսակ հայտնագործություններ»:

Տակն էլ ստորագրեցին.

«Քեռի Ֆեռդոր՝ տղա:

Շարիկ՝ որսորդական շուն:

Մատրոսկին՝ տնտեսական գործերով զբաղվող կատու»:

Հետո գրեցին հասցեն, ամեն ինչ արեցին այնպես, ինչպես պետք էր, եւ սպասեցին Պեչկինին: Գիշերը նույնիսկ քնել չկարողացան: Անընդհատ մտածում էին. կհաջողվի՞ իրենց բռնած գործը, թե ոչ:

Առավոտյան կատուն կարկանդակ թիւեց, Քերի Ֆեռդորը թեյ պատրաստեց: Իսկ Շարիկն ու Գավրյուշան շուտ-շուտ դուրս էին վազում, տեսնեն՝ զալի՞ս է արդյոք Պեչկինը, թե ոչ: Եվ ահա Շարիկը վազում է տուն.

— Գալիս է:

Պեչկինը մոտենում է դռանն ու թակում:

Ճայակը պահարանի վրայից հարցնում է.

— Ո՞վ է.

Պեչկինը պատասխանում է.

— Ես եմ, փոստատար Պեչկինը: Ծանրոց եմ բերել: Բայց չեմ տա: Որովհետեւ փաստաթուղթ չունեք:

Մատրոսկինը դուրս է գալիս արտասանդուղք եւ հանգիստ ասում.

— Իսկ մեզ պետք էլ չի: Մենք այդ ծանրոցը չենք վերցնի: Ինչների՞ս է պետք գուտալինը:

— Ի՞նչ գուտալին,— զարմանում է Պեչկինը:

— Սովորական: Որով կոշիկներ են մաքրում,— բացատրում է կատուն:— Այդ ծանրոցում հավանաբար գուտալին է:

Պեչկինը նույնիսկ աջքերն է չոռում.

— Այդ ո՞վ է ձեզ այդքան գուտալին ուղարկել:

— Քերիս է ուղարկել,— բացատրում է կատուն:— Նա գուտալինի գործարանում է ապրում, պահակի մոտ: Չորս կողմը գուտալին է, չգիտի ինչ անի: Եվ ահա ուղարկում է, ում պատահի:

Պեչկինը նույնիսկ շփոթվում է: Իսկ Շարիկը մոտենում է ծանրոցին, հոսոտում է ու ասում.

— Ոչ, արկդում բոլորովին էլ գուտալին չէ:

Պեչկինն ուրախանում է.

— Այ, տեսնո՞ւմ եք, գուտալին չէ:

— Օճառ է,— ասում է Շարիկը:

— Ի՞նչ օճառ,— գոռում է Պեչկինը:— Գլուխա մի՛ տարեք: Ինչո՞ւ են ձեզ այդքան օճառ ուղարկել: Ինչ է, բաղնի՞ք եք բացելու:

— Եթե օճառ է,— ասում է Քերի Ֆեռդորը,— ուրեմն մորաքույրս է ուղարկել՝ Զոյա Վասիլեւնան: Նա օճառի գործարանում որպես փորձարկող է աշխատում: Օճառ է փորձարկում: Նրան ավտորուս էլ չի կարելի նստել: Հատկապես անձրեսի ժամանակ:

— Ինչո՞ւ,— հարցնում է Պեչկինը:

— Անձրեսի ժամանակ նա ամբողջովին օճառի փրկուրով է ծածկվում: Ավտորուսը լիքն է մարդկանցով, հենց որ սեղմում են նրան, անմիջապես դուրս է թռչում: Մի անգամ էլ վեցերորդ հարկից աստիճաններով սահել է մինչեւ առաջին հարկ:

Այստեղ էլ Շարիկն է հարցնում.

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ հատակը լվացել էին: Աստիճանները թաց են եղել: Իսկ նա էլ ախր սոթիկ է, օճառված:

Լսում է Պեչկինն ու ասում.

— Օճառ է այստեղ, թե ոչ, միեւնույն է, ծանրոցը չեմ տա: Որովհետեւ փաստաթուղթ չունեք: Եվ ընդհանրապես, իզուր եք գլուխս տանում: Ես հիմար չեմ:— Ու թիվկթիվկացնում է զիմին:

Իսկ ճայակը լսում է թիվկթիվկոցն ու հարցնում.

— Ո՞վ է:

— Այդ ես եմ, փոստատար Պեչկինը: Ծանրոց եմ բերել ձեզ համար: Այսինքն՝ ոչ թե բերել եմ, այլ տանում եմ: Իսկ դու, բլրան, ձայնդ կտրիր:

Կատուն նրան ասում է.

— Դե լավ, մի՛ բարկացեք: Ավելի լավ է, եկեք թեյ խմենք: Կարկանդակ եմ թիւել:

Պեչկինն անմիջապես համաձայնում է.

— Կարկանդակ շատ եմ սիրում: Եվ ընդհանրապես ձեր տունն էլ եմ շատ սիրում:

Նրան սեղանի մոտ են տանում: Բայց Պեչկինը խորամանկն է: Ծանրոցից չի բաժանվում: Նույնիսկ աթոռի փոխարեն ծանրոցի վրա է նստում:

Այդ ժամանակ Քերի Ֆեռդորը կոնֆետը դնում է սեղանի մյուս ծայրին: Որպեսզի Պեչկինը կոնֆետի պատճառով ստիպված վեր կենա արկողի վրայից: Բայց Պեչկինին չես խարի: Նա ծանրոցի վրայից վեր չի կենում, այլ խնդրում է.

— Այ, այն կոնֆետներն ինձ տվեք: Դրանք շատ լավն են:

Դրան տեսեք, կոնֆետ է ուզում ուտել: Բայց այդ պահին ճայակը փրկում է դրությունը: Պեչկինը երկու կոնֆետ է դնում ծոցագրանը, որպեսզի տուն տանի: Իսկ ճայակը նստում է նրա ուսին եւ թոցնում կոնֆետները: Փոստատարը բղավում է:

— Վերադարձրու, դրանք իմ կոնֆետներն են:

Ու ճայակի ետելից է ընկնում: Ճայակը թռչում է խոհանոց: Պեչկինը՝ նրա ետելից: Այդ պահին էլ Մատրոսկինը փոխում է ծանրոցը: Կոնֆետները ձեռքին՝ Պեչկինը ետ է վազում ու նորից նստում ծանրոցի վրա: Բայց սա արդեն ուրիշ ծանրոց է:

Վերջապես նրանք ամբողջ թեյը խմում են ու կարկանդակներն էլ ուտում: Իսկ Պեչկինը, միեւնույն է, տեղից չի շարժվում: Մտածում է, թե ելի որեւէ բան կտան ուտելու: Շարիկն ակնարկում է.

— Փոստ գնալու ժամանակը չէ՞: Թե չէ շուտով կփակվի:

— Թող փակվի: Եվ իմ բանալին ունեմ:

Մատրոսկինն ասում է.

— Ինձ թվում է, որ ձեր տան սալօջախը անջատված չէ: Շատ հնարավոր է, որ իրդեհ ընկնի:

— Ես սալօջախ չունեմ,— պատասխանում է Պետքինը:

Այդ ժամանակ Շարիկը Ջետի Ֆեռդորին հարցնում է.

— Կարելի՞ է, ես նրան ուղղակի կծեմ: Ինչո՞ւ չի զնում:

Իսկ Պետքինը լավ լսողություն ուներ: Ու ամեն ինչ լսում է:

— Ահա թե ինչ,— ասում է նա:— Ես ձեզ մոտ մարուր սրտով եմ եկել, իսկ դուք ուզում եք ինձ կծել, հա՞: Խնդրեմ: Սրանից հետո ծանրոցն էլ չեմ բերի: Հենց վաղը ես կուղարկեմ:

Նրանց էլ հենց այդ էր պետք: Երբ Պետքինը զնաց, փակեցին դուռն ու ծանրոցը բացեցին:

Գլուխ բասերորդ — Արեւը

Ծանրոցի երեսին մի նամակ կար դրված.

«Միրելի կատու:

Բոլորս քեզ հիշում ենք: Ափսոս, որ դու կորել ես»:

— Լավ եմ կորել,— ասում է Մատրոսկինը:— Տնտեսվարն է ինձ վլոնդել:

«Ուրախ ենք, որ լավ ես ապրում: Իսկ անտառի ծառերը չպետք է կտրել: Չո տերն իրավացի է:

Քեզ համար փոքրիկ, տնային արեւ ենք ուղարկում: Թե ինչպես պետք է վարվել դրա հետ, դու զիտես: Տեսել ես մեզ մոտ: Կարգավորիչ էլ ենք ուղարկում, որով կարող ես շերմաստիճանը ավելացնել կամ պակասեցնել: Եթե ինչ-որ բան մոռացել ես, գրիր, ամեն ինչ կրացատրենք:

Հաջողություն: Արեւի Փիզիկայի ինստիտուտ: «Պատուհանի մոտ նստող զիտնական Նիկոլաեւ, որի խալաթի կոճակները կտրված են»:

Կատուն ասում է.

— Հիմա լսեք ինձ եւ մի՛ խանգարեք:

Նա արկդից հանեց խողովակածեւ փաթաթված մի թուղթ: Դա մի մեծ փոխադրանկար էր, որի վրա արեւ էր նկարված: Միայն ոչ թե ներկերով էր նկարված, այլ՝ նուրբ պղնձյա լարերով: Նկարը հարկավոր էր ամրացնել առաստաղին եւ միացնել էլեկտրականությանը:

Նրանք միահամուռ ուժերով սկսեցին պահարանը տեղաշարժել, որպեսզի բարձրանային նրա վրա ու արեւը ամրացնեին առաստաղին: Իսկ ճայակին դա դուք չեկավ: Սկսեց նրանց վրա տարբեր բաներ նետել, ֆշացնել ու կտցահարել: Բայց, այնուամենայնիվ, նրանք պահարանը տեղաշարժեցին: Կատուն վերցրեց արեւը, թրցեց ու կպցրեց առաստաղին: Իսկ հաղորդալարերը էլեկտրականությանը միացրեց: Բայց ոչ թե անմիջապես, այլ նախ՝ սեւ արկդին, ապա արկդից՝ էլեկտրականությանը: Այդ արկդը բռնակ ուներ: Կատուն բռնակը մի քիչ թերեց, եւ այ քեզ հրաշք. արեւը սկսեց լուսավորել: Նախ՝ եզրերը, հետո սկսեց տարածվել: Եվ սենյակը միանգամից տաքացավ ու լուսավորվեց: Բոլորն ուրախացան ու ցատկուեցին: Ցատկուեց նաև պահարանի վրա

նստած ճայակը: Բայց ոչ թե ուրախությունից, այլ այն պատճառով, որ շոգել էր: Նրանք շտապ պահարանն իր տեղը հրեցին:

Քենի Ֆեռդորն ասում է.

— Դուք ոնց կուզեր, բայց ես պետք է արեւառվեմ:

Նա ծածկոցը փուեց հատակին, տրուսիկով պառկեց վրան ու մեջքն արեւին արեց: Կատուն էլ պառկեց կոռքին ու սկսեց տաքանալ:

Տանն ամեն ինչ կենդանացավ: Եվ ծաղիկները թերվեցին դեպի արեւը, եւ թիթեռներ հավաքվեցին ինչ-որ տեղից: Գավոյուշա հորթուկն էլ սկսեց թռչկոտել, ինչպես բացատում, եւ ուրախությունից ինքն իրեն հարու տալ:

Իսկ բակում խոնավ է, ցուրտ ու ցեխ: Շուտով ձմեռ կլինի: Նրանց տունը փողոցի կողմից փայլում է խաղալիքի նման: Նույնիսկ մի ինչ-որ երաշտահավիկ եկավ ու սկսեց ծեծել պատուհանը: Բայց նրան ներս չթողեցին: Չպետք է երես տալ: Այ, երբ սառնամանիք ինի, ինդրեմ, թռող գա:

Այդ ժամանակից ի վեր նրանց կյանքը շատ երջանիկ դարձավ: Առավոտյան միացնում էին արեւը եւ ամբողջ օրը տաքանում: Դրսում սառնամանիք է, իսկ նրանց տանը՝ շոգ ամառ:

Փոստատար **Պեչկինը** շատ հետաքրքրասեր էր: Տեսնում է, որ զյուղի բոլոր տների ծխնելույզներից ծուխ է դուրս գալիս, իսկ Քենի Ֆեռդորի տան ծխնելույզից դուրս չի գալիս: Դարձյալ ինչ-որ բան կարգին չէ: Որոշում է իմանալ, թե ինչն ինչոց է: Գնում է Քենի Ֆեռդորի մոտ եւ ասում.

— Բարեւ ձեզ: «Ժամանակակից փոստատար» թերթ եմ բերել ձեզ համար:

Իսկ աչքերը հատել է վառարանին: Տեսնում է, վառարանում փայտը չի վառվում, բայց տունը տաք է: Ոչինչ չի հասկանում, իսկ տնային արեւն էլ չի տեսնում: Որովհետեւ կախված է անմիջապես իր գիշավերեւում, առաստաղից: Գլուխն այրում է:

Քենի Ֆեռդորն ասում է.

— Մենք «Ժամանակակից փոստատար» թերթ չենք բաժանորդագրվել: Դա մեծերի համար է:

— Ա՞ն, ափսոս,— տիրում է փոստատար **Պեչկինը**:— Ուրեմն ինչ-որ բան խառնել եմ:— Ու աչքերով չորս կողմն է փնտրում. սպօզախ կամ բուխարի չկա՝ արդյոք:

Արեւը նրան տաքացնում է: Նա քրտնում է, ջուր դառնում, բայց տեղից չի շարժվում: Ուզում է գաղտնիքը պարզել:

— Ուրեմն դուք «Ժամանակակից փոստատար» չե՞ք բաժանորդագրվել: Շատ ափսոս: **Պետքական** թերթ է: Աշխարհի նորությունները այնտեղ են գրում:

— Իսկ կերիաթներ չե՞ն տպում: Կամ պատմվածքներ կենդանիների մասին,— հարցնում է Քենի Ֆեռդորը:

Մատրոսկինը թերում է արեւային արկդի բռնակը: Արեւն ավելի է ուժեղանում: **Պեչկինը** նույնիսկ գիշարկն է հանում շոգից: Բայց ավելի վատ է զգում, արեւն ուղղակի այրում է ճակատը:

— Կենդանիների մասին հեքիաթնե՞ր,— հարցնում է:— Ոչ, այնտեղ ավելի շատ գրում են, թե ինչպես պետք է փոստը բաժանել եւ ինչպես են ավտոմատները դրոշմանիշ կպցնում:

Պեչկինը շոգից սկսեց ամեն ինչ շփոթել: Ասում է.

— Ոչ, ընդհակառակն, ավտոմատներն են փոստը բաժանում եւ դրոշմանիշ կպցնում, ինչպես կենդանիները:

— Ո՞ր կենդանիներն են դրոշմանիշ կպցնում,— հարցնում է Շարիկը:— Զիերը հո չե՞ն:

— Ի՞նչ գործ ունեն այնտեղ ձիերը,— ասում է փոստատարը:— Ես ձիերի մասին ոչինչ չեմ ասել: Ասացի, որ կենդանիները ավտոմատների վրա են աշխատում եւ հեքիաթներ են գրում այն մասին, թե ինչպես պետք է ձիերը փոստը բաժանեն:— Նա լրեց ու սկսեց մտքերը ժողովել:

— Մի ջերմաչափ տվեք ինձ: Ոնց որ թե ջերմություն ունեմ: Ուզում եմ չափել:

Կատուն բերում է ջերմաչաճը եւ այցողը դնում ուղիղ արևի տակ:

Պեչկինը թիվկացնում է ջերմաչափին, որ ջերմաստիճանը իջեցնի: Իսկ ճայակը հարցնում է.

— Ո՞վ է.

— Ես եմ, փոստատար Պեչկինը: «Մուրզիկա» ամսագիրն եմ բերել:

— Ի՞նչ գործ ունի այստեղ «Մուրզիկան»,— հարցնում է կատուն:

— Այս, հա: Ես «Ժամանակակից փոստատար» թերթն եմ բերել, որը դուք չեք բաժանորդագրվել: Որովհետեւ փաստաթուղթ չունեք:

Նա արդեն բոլորովին հավից ընկել էր: Նոյնիսկ գոլորշի էր բարձրանում նրանից, ինչպես ինքնաերից: Պեչկինը հանում է ջերմաչափն ու ասում.

— Երեսունվեց ու վեց է ջերմությունս: Կարծես թե ամեն ինչ կարգին է:

— Ի՞նչն է կարգին,— գոռում է կատուն:— Դուք քառասուներկու աստիճան տաքություն ունեք:

— Ինչո՞ւ,— սարսափում է Պեչկինը:

— Որովհետեւ երեսունվեց ու ելի վեց է: Բոլորը միասին ինչքա՞ն է անում:

Փոստատարը թղթի վրա հաշիվ է անում: Ստացվեց քառասուներկու:

— Վայ, մայրիկ ջան, նշանակում է, ես արդեն մեռել եմ: Շուտ անեմ, հիվանդանց վազեմ: Ինչքան ձեր տուն եմ եկել, միշտ հիվանդանց եմ ընկել... Չեք սիրում դուք փոստատարներին:

Բայց նրանք փոստատարներին սիրում էին: Ուղղակի Պեչկինին չեին սիրում: Արտաքնապես նա բարի էր թվում, բայց շատ չար էր ու հետաքրքրասեր:

Իսկ արեւը ամեն հարցում չէ, որ լավ էր: Այդ արեւի պատճառով նրանք մեծ անախորժություն ունեցան: Ջերի մեղողը հիվանդացավ:

Գլուխ քսանմեկերորդ — Քեռի Ֆեռդորի հիվանդությունը

Քեռի Ֆեռդորը տանը միշտ տրուսիկով էր ման գալիս՝ արեւառվում էր: Լրիվ դարչնազոյն էր դարձել, ասես հարավից եկած լիներ: Իսկ երբ դուրս էր գալիս, պետք է հազնվեր: Սկզբից՝ մայկան, հետո՝ բլուզը, հետո՝ շալվարը, հետո՝ սվիտրը, հետո՝ գլխարկը, շաքրիզը, վերարկուն, թաթմաններն ու թաղյակները: Այ թե որքան շատ բան պետք է հազներ: Իսկ կատվի ու Շարիկի համար շատ հեշտ էր, նրանց մուշտակը միշտ է հազներին է: Նույնիսկ մուշտակը հազներին էլ լողանում են:

Մի անգամ Քեռի Ֆեռդորին պետք էր բակ դուրս գալ ու երաշտահավերին կերակրել: Առանց հազնվելու, միայն տրուսիկով, բակ է դուրս գալիս: Կարճ ժամանակով: Իսկ դրսում սահնամանիք է, ձյուն: Եվ Քեռի Ֆեռդորը մրսում է: Տուն է մտնում ու սկսում դողացնել: Զերմությունը բարձրանում է: Շածկում է վերմակով եւ ոչ ուտել է ուզում, ոչ խմել: Վաս է զգում: Նա ասում է.

— Մատրոսկին, Մատրոսկին, կարծես թե հիվանդացել եմ:

Կատուն անհանգստացած՝ մուրաբայով թեյ է խմեցնում նրան: Շունը խանութ է վազում ու մեղր գնում: Բայց Քեռի Ֆեռդորը գնալով վատանում է: Պառկած է վերմակի տակ, չորս կողմը խաղալիքներ ու գրքեր, բայց նա բոլորովին ուշադրություն չի դարձնում: Շարիկը գնում է խոհանոց, նստում մի անկյունում ու լաց է լինում: Շատ է ուզում օգնել Քեռի Ֆեռդորին, բայց չի կարողանում:

— Ավելի լավ կլիներ են հիվանդանայի:

Կատուն է է իրեն կորցրել.

— Ես եմ մեղավոր, ինչո՞ւ չիետեւեցի Քեռի Ֆեռդորին... Եվ ինչո՞ւ այդ արեւը բերեցի:

Գավլյուշան մոտենում է Քեռի Ֆեռդորին, ձեռքերը լիզում. իբր, վեր կաց, Քեռի Ֆեռդոր, ինչո՞ւ ես պառկել: Իսկ Քեռի Ֆեռդորը վեր չի կենում: Գավլյուշան փոքրիկ էր ու հիմարիկ: Նա չէր հասկանում, թե ինչ բան է հիվանդությունը, իսկ Շարիկն ու կատուն շատ լավ հասկանում էին:

Կատուն ասում է.

— Ես վազեմ քաղաք, բժիշկ բերեմ: Պետք է Քեռի Ֆեռդորին փրկել:

— Ո՞ւր ես գնում,— հարցնում է Շարիկը:— Դուրսը բուք ու բորան է: Ինքդ էլ կկորչես:

— Ավելի լավ է կորչեմ, քան տեսնեմ, թե ինչպես է տանջվում Քեռի Ֆեռդորը:

— Այդ դեպքում, արի ես վազեմ,— առաջարկում է Շարիկը:— Ես ավելի լավ եմ վազում:

— Վազելու կարեւոր չէ,— պատասխանում է կատուն:— Ես մի մանկական լավ բժիշկ եմ ճանաչում: Նրան կրերեմ:

Նա տաքացրեց շշով կաթը, փաթաթեց փալասի մեջ եւ ուզում էր արդեն դուրս գալ, երբ դուռը բախեցին: Ճայակը հարցնում է.

— Ո՞վ է:

— Դոան ետելից պատասխանում են.

— Յուրայիններ են:

Կատուն ասում է.

— Այսպիսի եղանակին յուրայինները տանն են նստում: Հեռուստացույց են նայում: Միայն օտարներն են թափառում: Դուռը չենք բացի:

Քեզի Ֆեռդորը պառկած տեղից խնդրում է.

— Դուռը բաց արեք... Հայրիկս ու մայրիկս են եկել:

Եվ իսկապես, հայրիկն ու մայրիկն էին: Նրանց հետ է՝ փոստատար Պեչկինը:

— Տեսն՞ւմ եք, թե ձեր երեխային ինչ օրն են զցել: Դրանց պետք է իսկույն պոլիկլինիկա հանձնել: Փորձերի համար:

Շարիկը կատաղեց ու սկսեց փոստատարի թաղյակները կծոտել: Պեչկինը հազիվ մի կերպ դռնից դուրս պրծավ:

Իսկ մայրիկն արդեն հրամայում է.

— Անմիջապես ջեռակը բերեք:

Շարիկն ու կատուն իրար անցան, ամեն ինչ տակնուվրա արեցին, իսկ ջեռակը չկա:

Կատուն ասում է.

— Թույլ տվեք ես ջեռակ դաշնամ: Ես շատ տաք եմ:

Մայրիկը վերցնում է Մատրոսկինին, փաթաթում սրբիչ մեջ եւ դնում Քեզի Ֆեռդորի կողքին: Կատուն թաթերով գրկում է Քեզի Ֆեռդորին ու տաքացնում:

— Իսկ հիմա տվեք ինձ ձեր դեղերը:

Շարիկը ատամներով սեղմած բերում է դեղերի տուփը, եւ մայրիկը տաք կաթով մի հար է տախս Քեզի Ֆեռդորին: Եվ Քեզի Ֆեռդորը քնում է:

— Բայց սա դեռ բավական չէ,— ասում է մայրիկը:— Նրան պետք է նաեւ պենիցիլին սրսկել: Դուք պենիցիլին ունե՞ք:

— Ոչ,— պատասխանում է կատուն:

— Իսկ զյուղում դեղատուն կա՞:

— Ոչ, չկա:

— Ես քաղաք կզնամ՝ պենիցիլին բերելու, — ասում է հայրիկը:

— Ինչպե՞ս կզնաս, — հարցնում է մայրիկը:— Ավտոբուսներն էլ չեն աշխատում:

— Ուրեմն, քաղաքից «շտապ օգնություն» կկանչենք: Չի կարող պատահել, որ երեխան հիվանդանա, եւ օգնություն ցույց չտան:

Մայրիկը պատուհանից դուրս է նայում ու գլուխն օրորում:

— Զե՞ս տեսնում, թե դրսում ինչ է կատարվում: Ոչ մի «շտապ օգնություն» էլ չի գա: Թե չէ ստիպված կինեն տրակտորով քաշել: Խեղճ Քեզի Ֆեռդոր:

Մատրոսկինը վեր է թռչում տեղից ու գոռում է.

— Բոլորս էլ հիմար ենք: Տրակ-տրակ Միտյան բա ինչի՞ համար է: Չե՞ որ մենք տրակտոր ունենք:

Հայրիկն ուրախանում է.

— Ի՞նչ լավ եք ապրում: Նույնիսկ տրակտոր ունեք: Եկեք մերենան շուտ գործի զցենք: Բենզին լցնենք:

Շարիկն ասում է.

— Մեր տրակտորը սովորական տրակտոր չէ: Մթերային է: Ապուրով ու նրբերշիկներով է աշխատում:

Հայրիկը չզարմացավ: Ժամանակ չկար:

— Մի պայուսակ լիքը մթերք ունենք: Ե՞վ նարինջ, ե՛ւ շոկոլադ: Հարմա՞ր է:

— Ոչ,— ասում է կատուն:— Հարմար չէ: Միտյային չպետք է երես տալ: Մենք մի կաթսա լիքը խաչած կարտոֆիլ ունենք:

Եվ հայրիկն ու Շարիկը զնացին Միտյային գործի զցելու: Միտյան շատ ուրախացավ: Տրակտորային մի երգ սկսեց երգել, եւ ճամփա ընկան քաղաք՝ լրիվ կարտոֆիլային արագությամբ:

Իսկ մայրիկն ու Մատրոսկինը Քեռի Ֆեռդորին էին խնամում: Մայրիկն ասում է.

— Թաց սրբիչ բեր:

Մատրոսկինը բերում է:

Մայրիկն ասում է.

— Իսկ հիմա՝ ջերմաշափ:

Կատուն ասում է.

— Ինդրեմ:

Մայրիկը չէր իմանում, որ կատուներն այդպես խելոր են լինում: Կարծում էր, թե նրանք միայն միս են գողանում ու տանիքների վրա մլավում: Իսկ սա, ինդրեմ, ոչ թե կատու է, այլ խկական բուժքույր:

Մատրոսկինը նույնիսկ թեյ եփեց եւ մայրիկին կարկանդակ հյուրասիրեց: Նա շատ դուր եկավ մայրիկին: Ե՞վ ձեռքից ամեն ինչ գալիս է, ե՛ւ հետք զրուցել կարելի է:

Մայրիկն ասում է.

— Այս ամենի համար ես եմ մեղավոր: Իզուր ձեզ դուրս արեցի տնից: Կապրեիք մեզ մոտ, համ Քեռի Ֆեռդորը ոչ մի տեղ չէր գնա, համ էլ տանը կարգ ու կանոն կլիներ: Հայրիկն էլ ձեզնից շատ բան կսովորեր:

Կատուն ամացում է.

— Կարկանդակ թխելը ինչ է որ: Ես կարողանում եմ նաեւ գործել ու կար անել մերենայով:

Եվ այդպես, մինչեւ կեսգիշեր նրանք բուժում էին Քեռի Ֆեռդորին ու զրուցում: Շուտով տրակ-տրակ Միտյան ու հայրիկը վերադարձան եւ դեղ բերեցին:

Գլուխ բասներկուերորդ — Դեպի տուն

Հաջորդ օրը առավոտյան պայծառ եղանակ էր: Արեւը տաքացնում էր, եւ ձյունը զրեթե հալվել էր: Մեղմ ու հաճելի աշուն էր:

Կատուն առաջինն արթնացավ ու թեյ պատրաստեց: Հետո կովը կթեց եւ կաթը տվեց Քեռի Ֆեռդորին: Հայրիկն ասում է:

— Եկեք Քեռի Ֆեռդորի ջերմությունը չափենք: Գուցե արդեն լավացել է:

Ջերմաչափը դրեցին Քեռի Ֆեռդորի թեւի տակ: Շարիկն ասում է.

— Իմ քիթը ջերմաչափ է: Եթե այն սառն է, նշանակում է ես առողջ եմ: Իսկ երբ տաք է, նշանակում է հիվանդացել եմ:

— Շատ լավ ջերմաչափ է,— ասում է հայրիկը:— Բայց ինչպե՞ս պետք է թափ տայ: Կամ ուրիշի ջերմաստիճանը չափել: Օրինակ, եթե ես հիվանդանամ, ին քիթդ չե՞մ խորհի թեւիս տակ:

— Զգիտնմ:

— Բանն էլ հենց այդ է,— ասում է հայրիկը:

Այդ պահին ճայակը պահարանից ցած թռավ, նստեց Քեռի Ֆեռդորի մահճակալին ու տեսավ, որ նրա թեւի տակ ինչ-որ բան է փայլվում: Բոլորը հայրիկին էին նայում, իսկ նա գողացավ ջերմաչափը:

— Բոնեցեք,— բղավում է հայրիկը:— Ջերմաչափը թռավ:

Մինչեւ ճայակին կրոնեին, այնպիսի աղմուկ ու աղաղակ բարձրացավ, ու նույնիսկ Մուռկան եկավ գոմից եւ պատուհանից նայեց: Գլուխը մոցրեց ներս ու ասում է.

— Թյո՛ւ: Բոլորովին էլ ծիծաղելի չէ:

Բոլորն իսկույն հանդարտվեցին: Հապա ինչ եք կարծում Մուռկան է խոսում.

— Ինչ է, դու խոսել գիտես,— հարցնում է կատուն:

— Ըի՞լ:

— Իսկ ինչո՞ւ էիր առաջ լոռում:

— Լավ էի անում: Իսկ ինչի՞ մասին պետք է խոսեի ձեզ հետ... Օյ, սալա՛թ է աճել:

— Դա սալա՛թ չէ,— բղավում է կատուն:— Դա դարահալվե է:— Եվ Մուռկային պատուհանից ես է հրում:

Նրանք բռնեցին ջերմաչափը եւ տեսան, որ ջերմությունը կանոնավորվել է: Քեռի Ֆեռդորը համարյա լավացել է: Մայրիկն ասում է.

— Դե, որդիս, ինչ ուզում ես ասա, բայց քեզ տուն ենք տանելու: Քեզ ինամք է հարկավոր:

— Իսկ եթե ուզում ես կատվին կամ Շարիկին, կամ էլի որեւէ մեկին վերցնես հետո՝ վերցրու: Մենք չենք առարկի, — ասում է հայրիկը:

Քենի Ֆեռդորը հարցնում է կատվին:

— Կզա՞ս ինձ հետ:

— Կզայի, եթե մենակ լինեի: Բա Մուռկա՞ս: Տնտեսությո՞ւնը: Զմեռվա պաշա՞րը: Եվ հետո ես արդեն ընտելացել եմ գյուղին, մարդկանց: Ինձ բոլոր ճանաչում են ու բարեւում: Իսկ քաղաքում պետք է հազար տարի ապրես, որ ճանաչեն:

— Իսկ դու, Շարիկ, կզա՞ս:

Շարիկը չգիտի ինչ ասի: Իր տեղը կյանքում արդեն գտել Է՝ ֆոտոորտրդությամբ է զբաղվում, դե արի ու գնա:

— Դու, Քենի Ֆեռդոր, ավելի լավ է առողջացիր եւ ինքդ արի մեզ մոտ:

Հայրիկն ասում է.

— Մենք բոլոր միասին ձեզ հյուր կգանք:

— Ճիշտ է, — ասում է Մատրոսկինը: — Կիրակի օրերին եկեք մեզ մոտ դահուկ քշելու: Իսկ ամռանն արձակուրդը մեզ մոտ անցկացրեք: Երբ Քենի Ֆեռդորը դպրոց գնա, թող ամառային ու ձմեռային արձակուրդները մեզ մոտ անցկացնի:

Այդպես էլ պայմանավորվեցին:

Մայրիկը Քենի Ֆեռդորին տաք-տաք փաթաթեց, իսկ հայրիկին պատվիրեց ինչպես հարկն է կերակրել տրակտորին: Հետո հարցրեց Մատրոսկինին.

— Քաղաքից ի՞նչ ուղարկենք ձեզ համար:

— Մենք ամեն ինչ ունենք: Միայն թե գրքերն են քիչ: Եվ մեկ էլ անհովար գլխարկ եմ ուզում: Նավաստիական:

— Լավ, — ասում է մայրիկը: — Անպայման կուղարկեմ: Նավաստու մայկա էլ կճարեմ: Իսկ քեզ, Շարիկ, ոչինչ պետք չէ:

— Մի փոքրիկ ռադիո կուգեի ունենալ: Բնումս նստած հաղորդումներ կլսեի: Եվ մի կինոապարատ: Ֆիլմ պետք է նկարահանեմ կենդանիների մասին:

— Լավ, — ասում է հայրիկը: — Այդ հարցով ինքս կգրադաւամ, անձամբ:

Ու նրանք տրակտոր նստեցին՝ հայրիկը, մայրիկը, Քենի Ֆեռդորն ու Շարիկը: Շարիկը պետք է Միտյային հետ քերեք: Նրանք մեկնեցին: Հանկարծ Մատրոսկինը դուրս թռավ պարտեզի դռնակից.

— Կանգնեցե՛ք, կանգնեցե՛ք:

Կանգ են առնում: Կատուն ճայակին տալիս է նրանց:

— Ահա, վերցրեք: Սրա հետ կյանքներդ ուրախ կանցնի:

Հայրիկը խցիկից հարցնում է.

— Այդ ո՞վ է:

Ճայակը պատասխանում է.

— Ես եմ, փոստատար Պեչկինը: «Մուրզիլա» ամսագիրն եմ բերել: — Եվ բոլորը հիշեցին Պեչկինին: Մայրիկն ասում է.

— Ի՞նչ անհարմար է, նրան բոլորովին մոռացել ենք.

— Ճիշտ էլ արել եք,— ասում է Շարիկը:— Նա չար մարդ է:

— Չար է, թե բարի, կարեւոր չէ: Կարեւորն այն է, որ նրան հեծանիվ ենք խոստացել:

— Այստեղ հեծանիվ լինո՞ւմ է,— հարցնում է հայրիկը:

— Ոչ,— ասում է Շարիկը:

— Ահա թե ինչ,— առաջարկում է Մատրոսկինը:— Նրա համար վիճակախաղի տոմսեր գնեցեք: Հարյուր ոռլելու: Ինչ կուզի, թող այն է շահի: Մոտոցիկլետ կամ մեքենա: Չէ՞ որ ինքն է այդ տոմսերը վաճառում: Կրկնակի օգուտ կանի: Ե՞վ տոմսերի վաճառվելու տեսակետից, ե՛ւ շահելու:

Այդպես էլ արեցին: Պեչկինից վիճակախաղի տոմսեր գնեցին ու տարան փոստ Պեչկինին տալու: Փոստատարը նույնիսկ զգացվեց.

— Ծնորհակալություն: Ինչո՞ւ էի ես վատը: Որովհետեւ հեծանիվ չունեի: